

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **ازتاک** جريدة يومية سياسية وأدبية - البيرة للحولة، إجازة ريشيان

1500 L.Ո. 76Գ-ՏԱՐԻ, ԹԻԻ 181 (21523) ՇԱՔԱԹ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ՊԱՍՊՏԵԹԻ ՄԷՁ


ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԵՒ ԴԵՄՊԱՆ ՊԵԹԸԸ ԲՆՆԱՐԿԵՑԻՆ ԿԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԱՊՈՒԱԾ ԸԱՐՅԵՐ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտ երկվ Պապատեթի իր բնակարանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթոն Պեթթը, որուն հետ քննարկեց տեղական, շրջանային եւ միջազգային վերջին իրադարձութիւնները:

Նախագահ Լախուտ կոչ ուղղեց Ուաշինկթոնի՝ աշխուժ դերակատարութիւն ցուցաբերելու Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին նկատմամբ, Վինսթոնը ՄԱԿի, որպէսզի ան կարենայ միջազգային օրէնքները գործադրել շրջանին մէջ, հաստատելու համար խաղաղութիւն եւ կայունութիւն:

Նախագահ Լախուտ Պեթթը յայտնեց, որ եթէ տիրող կացութիւնը շարունակուի, Միջին Արեւելքի կայունութիւնը խնդրոյ առարկայ պիտի դառնայ եւ առիթ պիտի տայ յարուածութիւնը աւելի եւս սրելու:

Նախագահ Լախուտ նկատել տուաւ, որ Լիբանանի եւ Սուրիոյ դէմ իսրայէլեան բռնարարները յաւելեալ փաստեր են, թէ իսրայէլեան կառավարութիւնը խաղաղութեան համար չ'աշխատիր, այլ՝ ամէն ջանք կը տան ձախողեցնելու շրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու որեւէ փորձ կամ նախաձեռնութիւն:



Միւս կողմէ, Պեթթը շեշտեց Մ. Նահանգներու ճշդած կեցումները Միջին Արեւելքի մէջ արձանագրուող իրադարձութիւններուն հանդէպ:

«ԱՉԴԱԿ»Ի ՄՐՅԱՆՔ

Երկուշաբթի, 13 Հոկտեմբերէն սկսեալ հետեւեցը «Ազդակ»ի պատմամշակութային մրցանքին: Մանրամասնութիւնները՝ օրին:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱՅԵԱԼ ԸԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄՔ ՍԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ



Վարչական բարեկարգումի պետական նախարար, Փաղանգաւոր Կուսակցութեան ղեկավար Քարիմ Բագրատունիի հրատարակած, երկվ, Փաղանգաւոր Կուսակցութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ լիբանանեան կուսակցութիւններու հանդիպում մը: Ներկայ գտնուեցան Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան, Ամալ շարժումի ղեկավար՝ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի ներկայացուցիչը, Պաաս Կուսակցութեան ընդհանուր քարտուղարը, Դովմի Կուսակցութեան փոխ նախագահը, Նասրական շարժումի ընդհանուր քարտուղարը, Հըպպալլայի քաղաքական խորհուրդի փոխ նախագահը, Ընկերվար Յաւաթիմական Կուսակցութեան ներկայացուցիչը, արգիլեալ Լիբանանեան Ուժերու Կուսակցութեան ներկայացուցիչը, Միասնականութիւն Կուսակցութեան նախագահը, Աշխատաւորներու Լիկայի ընդհանուր քարտուղարը, Լիբանանեան Ժողովրդավարական Կուսակցութեան ընդհանուր քարտուղարը, Լիբանանեան Ազգային ձակատ Կուսակցութեան փոխ նախագահը եւ Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան ընդհանուր քարտուղարը:

Հանդիպումին քննարկուեմի առարկայ դարձան շրջանի կացութիւնը եւ իսրայէլեան շարունակուող բռնարարները:

Հանդիպումի աւարտին հրապարակուեցաւ պաշտօնական միացեալ հաղորդագրութիւն մը, որ շեշտեց Իսրայէլի մշտական վտանգ հանդիսանալը Լիբանանին եւ արաբական աշխարհին, ինչպէս նաեւ լիբանանեան եւ սուրիական հողերու բռնագրաւումը:

Հաղորդագրութիւնը շեշտեց Լիբանան - Սուրիա երկկողմանի գործակցութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ ներլիբանանեան միասնակցութեան ամրապնդման հրամանալարը:

Հաղորդագրութեան մէջ ընդգծուեցաւ նաեւ, որ Սուրիոյ դէմ իսրայէլեան բռնարարները ցոյց կու տան, թէ ինչ կրնան ըլլալ իսրայէլեան կառավարութեան ախորժակները նաեւ արաբական այլ երկիրներու հանդէպ:

Հաղորդագրութիւնը նշեց նաեւ, որ հանդիպումին մասնակից կուսակցութիւնները խստի դատապարտած են իսրայէլեան ազդեցութեան տակ մշակուած՝ ամերիկեան Քոնկրէսի կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրագիրը, նկատել տալով, որ Սուրիա մեծ դեր կը խաղայ շրջանին մէջ կայունութեան պահպանման համար:

Հաղորդագրութիւնը կոչ ուղղեց ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին՝ ճշուն բանեցնելու Իսրայէլի վրայ եւ կասեցնելու անոր բռնարարները:

ՊԻԵԼՈՒՈՒՄԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

Պիելոուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքօ երկվ ընդունեց Հայաստանի պաշտպանութեան նախարար, Ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար Սերժ Սարգսեանը: Հանդիպումին ընթացքին Լուքաշենքօ յայտարարեց, թէ Պիելոուսիա պատրաստ է ռազմական մարզին ներս յայնստաւալ գործակցութիւն հաստատելու Հայաստանի հետ:

Լուքաշենքօ տեղեկացուցեց, թէ այս օրերուն Պիելոուսիոյ երեք մարզերու մէջ տեղի կ'ունենան «Մաքուր երկիր-2003» ռազմափորձերը, եւ նախարար Սարգսեանը հրաւիրուած է ներկայ գտնուելու այդ ռազմափորձերուն: «Մենք գաղտնիքներ չունինք, մանաւանդ որ մենք հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան մասնակից ենք», նշած է Լուքաշենքօ:

ԻՐԱՆՑԻ ՇԻՐԻՆ ԷՊԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԻՍԼԱՄ ԿԻՆՆ Է, ՈՐ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ԽՈՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻՆ

ԴԱՄԱՍԿՈՍԵՆ ԿՈՉ՝ ՃՈՐՃ ՊՈՒՇԻ

ԴԱՄԱՍԿՈՍ, 10 (ԱՅՓ).- Սուրիական «Սաուրա» օրաթերթը Ուրբաթ օր կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի եւ անոր կառավարութեան՝ վերատեսութեան ենթարկելու Դամասկոսի դէմ պատժամիջոցներու հաստատումը նախընտրող որոշումը:

«Սաուրա» պարմանք յայտնեց, թէ ամերիկեան կառավարութիւնը ինչպէ՞ս Ներկայացուցիչներու Տան մէջ կանաչ լոյս տուած է Իսրայէլի «բարեկամներուն»՝ որդեգրելու համար որոշում մը, որ կը բռնարարէ գերիշխանութեան եւ ուրիշներուն ներքին հարցերուն միջամուխ դառնալու սկզբունքները:

«ԹՐԱՍԵԿԱ»Ի ԾԻՐԷՆ ՆԵՐՍ ԵՒՍ ՊԱՔՈՒ ԿԸ ԴՐՍԵՒՈՐԷ ԻՐ ՀԱԿԱՀԱՅ ՄՈԼՈՒՑՔԸ

Արպայեան արգելք հանդիսացաւ Հայաստանի փոխադրամիջոցներու եւ հաղորդակցութեան նախարարին ընտրութեան՝ իբրեւ «ԹՐԱՍԵԿԱ» ծրագրի Միջկուսակցական Յանձնաժողովի ընդհանուր քարտուղար:

Երեւանի մէջ կայացած յանձնաժողովի երրորդ նիստին ընթացքին Հայաստան յառաջիկայ տարուան համար ընտրուած էր «ԹՐԱՍԵԿԱ»ի նախագահող երկիր, եւ ինքնաբերաբար Միջկուսակցական յանձնաժողովի ընդհանուր քարտուղարի պաշտօնը նոյնպէս պէտք է ստանձնէր Հայաստանի փոխադրամիջոցներու նախարարը: Սակայն, որովհետեւ այս ընտրութիւնները կը կայանան փոխ համաձայնութեան հիման վրայ, Արպայեան օգտագործեց այս առիթը եւ դէմ քուէարկելով խոչընդոտեց նախարար Անդրանիկ Մանուկեանի նախագահութիւնը Միջկուսակցական յանձնաժողովին: Հետեւելով Արպայեանի օրինակին, Թուրքիա մնաց ձեռնպահ: Այս պայմաններուն մէջ, Հայաստան ղեկավարելի միջոցին եւ առաջադրած է ոչ հայ թեկնածու մը՝ պուլկարուի Լիւսմիլա Տրենկովայի անունը, որ միաձայնութեամբ ընդունուած է:

Նախարար Մանուկեան յայտարարեց, որ Արպայեան եւս այս կառոյցին մէջ պիտի չունենայ ընդհանուր քարտուղար, որովհետեւ Հայաստան իր կարգին այսուհետեւ դէմ պիտի քուէարկէ պարպեանական որեւէ նախաձեռնութեան:

Երոպական Յանձնաժողովի ներկայացուցիչ Փեր Պրեքս Սուրբըն դատապարտած է պարպեանական պատուիրակութեան խնդրաբայոյց կեցումները:

ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒ ԱՐԴԵՕՔ Ո՞ՒՐ ՊԻՏԻ ՈՒՉԷՐ ՄԵՌՆԻԼ...

Չորս երկիրներ՝ Արպայեան, Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Թուրքիա «կը պայքարին» Հայտարար Ալիեւը իրենց մօտ չպահելու համար: Այս տեղեկութիւնը փոխանցող «Ռուսիոյ Քաղաքական Նորութիւններու Գործակալութիւն»ը, որ իր կարգին տեղեկութիւններ ստացած է ռուսական յատուկ ծառայութիւններէ, կը նշէ, թէ Հայտարար Ալիեւ, որ պարպապէս «կը շնչէ» արեւտագիտական սարքերու շնորհիւ, տակաւին կը գտնուի Քիլիվիէնտի հիւանդանոցը (Մ. Ն.): Սակայն, Ուաշինկթոն հասկըցուցած է Արպայեանի նախագահը փոխարինող Իլիամ Ալիեւին, աւագ Ալիեւի մահուան մասին պաշտօնական յայտարարութիւն մը Միացեալ Նահանգներէն կատարելով «չափազանց անցանկալի է», որովհետեւ կը վնասէ ամերիկեան բժշկութեան վարկին...

Կը նախատեսուէր Հայտարար Ալիեւը վերստին տեղափոխել թրքական «Կիլիհանէ» հիւանդանոցը եւ հոն յայտարարել Արպայեանի ղեկավարին մահը: Սակայն «Կիլիհանէ»ն եւս կը մերժէ ընդունիլ Հայտարար Ալիեւը, տրուած ըլլալով որ քանի մը տարի առաջ նոյն հիւանդանոցին մէջ մահացած էր Արպայեանի նախկին նախագահ Ապուլֆէյ Էլշիպէյը, իսկ պէրի երկու նախագահի մահը՝ մէկ հիւանդանոցի մէջ՝ շատ է...

Ամէնէն յատկանշականը այն է, սակայն, որ Իլիամ Ալիեւ եւս կտրականապէս դէմ է, որ իր հայրը «պաշտօնապէս վախճանի» Արպայեանի մէջ՝ Պաքո ծամանելէն ետք...

«Ռուսիոյ քաղաքական նորութիւններու գործակալութեան» համաձայն, բացառուած չէ, որ Հայտարար Ալիեւ պաշտօնապէս մեռնի... Քիլիվիէնտէն մեկնող օդանաւին մէջ: Յարդ յստակ չէ նաեւ, թէ ո՞ւր էջք պիտի կատարէ նախագահին օդանաւը՝ Լոնտոն, ուր տարօրինակօրէն կը գտնուի Ալիեւներու ընտանեկան դամբարանը, թէ Նախիջեւան՝ աւագ Ալիեւի ծննդավայրը:

Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊ

ՊԱՔՈՒ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման համար ԵԱՀԿ Մինսքի խմբակի նոր առաջարկները, ըստ Արպայեանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբեյի, պիտի հրապարակուին Արպայեանի նախագահական ընտրութիւններէն ետք:

Կուլիբեյ «Թուրան» լրատու գործակալութեան յայտնած է, թէ հայաստանցի իր պաշտօնակիցին՝ Վարդան Օսկանեանի հետ Նիւ Եորքի եւ Պրիւքսէլի մէջ հանդիպումները պաշտօնական չէին, որովհետեւ իրենք «նախագահներուն կողմէ բանակցութիւններ վարելու յապօրութիւն չեն ունեցած»:

Արպայեանցի պաշտօնատարը փորձած է հրաժարիլ նախապէս ձեռք բերուած համաձայնութիւններէն, պնդելով, որ որեւէ համաձայնութիւն չէ գոյացած, աւելցնելով, որ թէ՛ Քի Ուէսթի եւ թէ Փարիզի մէջ կողմերը համաձայնութիւն գոյացուցած չեն: Կուլիբեյի համաձայն, իրենց համար «անընդունելի են հայկական կողմի այն արտայայտութիւնները, թէ բանակցային գործընթացը պէտք է սկսիլ այն կէտէն, ուր դադարած էր»:

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԵՐԵՒԱՆԵՆ ԺԱՄԱՆԵՑ ՊԵՅՐՈՒԹ

Կլենտէյի քաղաքապետ Յրէնք Քուէնթերն երկվ առաւօտ Երեւան-Պէյրոս թռիչքով ժամանեց Պէյրոսի միջազգային օդակայան եւ պաշտօնական հիւրերու յատուկ սրահին մէջ ղեկավարուեցաւ Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ընկերներուն, Պուրձ Հանուտի քաղաքապետին եւ քաղաքապետական խորհուրդի անդամներուն կողմէ:

Յիշեցնենք, որ Կլենտէյի պատուիրակութիւնը, քաղաքապետին գլխաւորութեամբ, Հայաստանի մէջ (Երեւան, Կապան) ունեցած էր քաղաքական բազմաթիւ հանդիպումներ, որոնց շարքին՝ Հ. Յ. Գ. Գերագոյն Մարմինի անդամներու հետ:

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՄԱՀԱ ԿԸ ՀԱՍԿՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ ԴԻՄԱԳՐԱԿԱԾ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեղեկատվության նախարար Միշել Մրմահա երկվ մամուլյան ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ յառաջիկայ քանի մը շաբաթներուն, կառավարութիւնը պիտի քանայ յարմար լուծումներ գտնել Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուկի հարցերուն գծով:

Մրմահա հասկացողութիւն ցուցաբերեց ապահովագրութեան մարզի դիմագրաւած էլեւմտական տազնապին մասին եւ շեշտեց, որ ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ յառաջիկայ Երեքշաբթի եւ Չորեքշաբթի տեղի պիտի ունենայ խորհրդածողով մը՝ ապահովագրութեան մարզին յատուկ: Խորհրդածողովը պիտի հովանաւորուի նախագահ Վոր. Էմիլ Լահուտի կողմէ:

Մրմահա ընդգծեց, որ կառավարութիւնը Ապահովագրութեան ազգային սնտուկին դիմագրաւած էլեւմտական հարցերը պիտի լուծէ լրջօրէն քննարկուի ենթարկելով 2004ի պետական պիտուէի նախագիծը:

Մրմահա անընդունելի նկատեց այն, որ պետական հաստատութիւններ պարտական կը մնան Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուկին:

ԻՍԱՍ ՖԱՐԵՍ ԼՐԱՏՈՒԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ ԶԱՐՄԱՆՔ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի լրատուական գրասենեակը վարման յայտնեց այն լուրին մասին, թէ կառավարութեան տուած որոշումները պէտք է հետապնդուին:

Գրասենեակին համաձայն, չգործադրուած որոշումներուն մեծ մասը կը գտնուի նախարարական յանձնախումբերու մօտ: Նշելով յանձնախումբերուն կը նախագահէ Ֆարէս:

Ֆարէսի լրատուական գրասենեակը շեշտեց, որ այս հարցը յաւազոյն ապացոյցն է, որ նախապէս կառավարութիւններու կողմէ տրուած են որոշումներ, որոնք մինչեւ օրս չեն գործադրուած:

ՇՈՒՆԵՐՈՒ ՄԵԾ ՅՈՅՅ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Աւելի քան տասը հազար շիի իսլամներ, որոնցմէ ոմանք զինուած, մասնակցեցան յուղարկարութեան երկու իրաքցիներու, որոնք սպանուած էին ամերիկեան ուժերու հետ բախումի մը ընթացքին: «Ոչ ամերիկացիին» քացազանչելով, հազարաւոր շիիներ հետեւեցան դազադներուն՝ Պաղատի Սատր քաղաքին փոխարինելու, որոնք կ'առաջնորդէր շիի կրօնատար մը, որ բարձրացուած էր սուր մը:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

Սեպուհ Ծահպագեանի մահուան Բ. տարեկիցին առիթով, ՏԵՐ ԵՒ ԵՐԿԻՆ Արահամ Արահամեան 50,000 Լ.Ո.

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Գիտ Խաչի Կիրակի՝ Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է: Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատուցուի ոչխար նուիրել եւ կամ մասնակից դառնալ ճիւղական նուիրում, թող բարի ըլլան կապ պահել թաղականութեան գրասենեակը: Հեռ. 01 / 981102/3 քիւի, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ կէսօրը ետք ժամը 1:00:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աֆիլ իրարօգնութեան սնտուկը ուրախ է յայտարարելու, թէ 2003-2004 տարեշրջանին համար պիտի շարունակէ նախորդ տարի հաստատած աշակերտական ֆոնտը: Աֆիլ աշակերտական ֆոնտէն կրնան օգտուիլ նախակրթարանի եւ միջնակարգի բոլոր հայ աշակերտները, որոնք կը յաճախեն հայկական վարժարան:

Դիմումագրութեան կարելի է ստանալ Աֆիլի գրասենեակէն, «Արիմ» շէնք, Դ. յարկ, Հոկտեմբեր 14էն 18, 2003:

Աֆիլ իբրեւ իրարօգնութեան սնտուկ միշտ ալ պատրաստ եղած է առողջապահական եւ կրթական մակարդակներու վրայ իր նպաստը բերելու:

Շնորհակալութիւն բոլոր իր անդամներուն, որոնք առաջին օրէն մեցուկ կանգնեցան եւ հաւատացան անոր առաքելութեան:

ԱՅՇԻԼ

Շար.ը՝ էջ 10

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԿԵԱՆ
100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ


Ելոյթ կ'ունենայ Հայրենի միջազգային դաշնակախար ԱՐՄԷՆ ՊԱՊԱՆԻԱՆԵԱՆ

Ընկերակցութեամբ Հայրենի տաղանդաւոր ջութակախար ՄԱՐՏԻՆ ԵԱՒՐԵԱՆ

Հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էստեմպլի հոլ»-ին մէջ

Տոմսերը ստանալ Համազգայինի գրասենեակէն (Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), տիսթրէք Եթա (Պուրճ Համուտ), Սթիսիօ Վաչէ (Համրն), Obelix գրասենեակ (Անթիլիաս) եւ Ելոյթի օրը կիշէն կամ հեռաձայնով 01 - 249375 եւ 01 - 265899 քիւերուն:



ԱԿՆԱՐԿ

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԻՆՉՈՒՒ ԻՐԱՔ ԳԻՏԻ ԱՐՇԱԷ

Թուրքիոյ վարչապետ Էրտողանի այն յայտարարութիւնը, թէ թուրք պիտուորներ Իրաք կը գործուողուն իրաքցի ժողովուրդին խաղաղութիւն ապահովելու համար, պարզապէս քաղաքական մեծ սուտ մըն է:

Ընդհանրապէս նման պարագայներու մէջ միշտ ալ վեր առած ենք այն կէտը, թէ «ապակիէ տան մէջ բնակողը իրաւունք չունի ուրիշին տունը քարկոծելու», այսինքն՝ այն պետութիւնը, որ ծանօթ է իբրեւ բռնազրբաւոր ու ցեղասպան (Հայ Դատ, կիպրական դատ, քրտական դատ), իրաւունք չունի այլոց խաղաղութիւն ապահովելու սին յաւակնութիւններ ունենալու:

Սակայն այս անգամ կարկինը քիչ մը աւելի լայն բանանք եւ հարցը քննենք ինչպէս որ է:

Ամբողջ աշխարհը գիտէ բնականաբար, թէ թուրքերը Իրաք պիտի չերթան իրաքցիներուն խաղաղութիւն ապահովելու համար: Ի միջի այլոց այդ կարողութիւնն ու կարելիութիւնն ալ չունին անշուշտ: Սակայն, շատերու համաձայն՝ թուրքերը այսքան երկարատեւ հարցը քաշքշելէ ետք վերջապէս որոշումը տուին, որովհետեւ անոնց բաւական լաւ պատահ մը բաժին պիտի իյնայ կարկանդակէն, իմա՝ քարիւղէն:

Լրիւ սխալ կարծիք է այս մէկը, ինչպէս նաեւ շատ նախնական մտածողութիւն: Այդ կարկանդակը իր ամբողջութեամբ յստակ է, թէ որո՞ւ բաժին պիտի իյնայ...

Ուրեմն ինչո՞ւ թուրքերը նախաձեռնեցին այս քայլին, հակառակ իրենց հանրային կարծիքին եւ իրաքցի ժողովուրդին կամքին:

Պատասխանը յստակ է. քիւրտերը «Կլմելու»: Ասոր յաւազոյն ապացոյցը կու տայ թրքական «Հիւրիէթ» օրաթերթը, որուն համաձայն՝ Անգարա եւ Ուաշինկթըն տարակարծիք են թրքական ուժերուն հաստատման վրային գծով: Ուաշինկթըն առաջարկած է Անգարա նահանգը, որ ոչ քրտական սինիի շրջան մըն է եւ կը տարածուի Պաղատի Արեւմտեան մինչեւ Սուրիոյ եւ Յորդանանի սահմանները, մինչ Անգարա կը պահանջէ Թիքրիթի շրջանը, որ յարաբերաբար շատ աւելի մօտակայ է քրտական շրջաններու:

Թէ ի՞նչ պիտի ըլլայ թրքական վերջնական որոշումը՝ յստակ չէ տակաւին, եւ ըստ Էրտողանի՝ Ուաշինկթըն - Անգարա բանակցութիւնները ընթացքի մէջ են դեռ այս գծով, սակայն մէկ բան շատ յստակ է ու անվիճելի, որ թուրքերը չեն հրաժարած կայսերապաշտ իրենց ախորժակներէն եւ փաստօրէն ամէնէն փոքր առիթն իսկ պատրաստ են օգտագործելու՝ հարուածելու իրենց թշնամի պահանջատէր ժողովուրդները, անկախ այն իրողութենէն, թէ ի՞նչ կրնայ ըլլալ անոր արդիւնքը, որովհետեւ դուռը պարնողը անպայման որ պատասխանն ալ կ'առնէ:

ՀՐԱԶ ՎԱՐՄԱՊԵՏԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

«Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒԳ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 13 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:30ին, «Ազատամարտ» ակումբի «ժաբ Զուլատարեան» սրահին մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ

Այսու կու գանք մեր հաւատացեալ ժողովուրդին տեղեկացնելու, թէ Հայաստանեայց առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու 2003-2004 տարեշրջանի վերամուտի առիթով տեղի պիտի ունենայ հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ Ժիւնիի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003ին հովանաւորութեամբ բեմի առաջնորդ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ

Սիրով հրաւիրուած է մեր հաւատացեալ ժողովուրդը Կիրակնօրեայ մեծ ընտանիքի անձնակազմի կողքին հաղորակից դառնալու Զրիստոսի մարմնի ու արեան:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՇՈՒՆԵՐՈՒ ՄԵԾ ՅՈՅՅ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի համալսարանական փայլուն ուսանող՝ վաղամեռիկ Սեպուհ Ծահպագեանի մահուան Բ. տարեկիցին առիթով:

Հոգեհանգստի արարողութեան պիտի նախագահէ Լիբանանի թեմի բարեջան առաջնորդ՝ Տ. Գեղամ եպ. Խաչերեան:

ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենապատիւ եւ Գերբրայնիկ տեր Ներսէս Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց կաթողիկոս պատրիարքը, Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003ին, պիտի մեկնի Հռոմ, ընդառաջելով նորին սրբութիւն Յովնանու Պողոս Բ. սրբազան քահանայապետի հրաւերին՝ մասնակցելու համար անոր գահակալութեան 25ամեակին նուիրուած յոբելեանական արարողութիւններուն:

Այս առիթով, կաթողիկոս պատրիարքը ներկայ պիտի գտնուի նաեւ սրբազան քահայանապետի կողմէ 2001ի գումարուած եպիսկոպոսներու Սին-հոդոսի անշուքեամբ Առաքելական յորդորի ստորագրութեան, Մայր Թերեզայի Երանցման արարողութիւններուն, ինչպէս նաեւ Տիեզերական Եկեղեցւոյ 31 նոր ծիրանաւոր կարտիսմալներու աստիճանի տուելութեան:

Հոգեւոր տեղը Պէյրութ նստավայր պիտի վերադառնայ 22 Հոկտեմբերին:

Պէյրութ, 10 Հոկտեմբեր 2003

ԴԻՄԱՆ
ՀԱՅ ՎԱԹՈՐԴԿԷ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆ

ՄԱՀԱԶԳ

Տիկին Արշո Բէլլեան եւ դուստրը՝ Տիանա Տէր եւ տիկին Մարթին եւ Լենա Լէօնպէրկըր Տէր եւ տիկին Գէորգ եւ Արուսեակ Սազապետոյեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Յովսէփ եւ Ատրինէ Պոյաճեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Ռիշար եւ Արմինէ Միտն եւ զաւակուներ

Տիկին Ուիսաննա Մըխարբեան եւ դուստրը՝ Աստղիկ Տէր եւ տիկին Թորոս եւ Թայի Մըխարբեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Ժիրայր եւ Մարիա Մըխարբեան եւ զաւակուներ

Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Տօր, եղբոր, մօրեղբոր, աներորդիին եւ քեռայրին՝

ՆՈՒՊԱՐ ՍՏԵՓԱՆ ԲԷԶԵՃԵԱՆԻ (ՏՆԵԱԿ՝ Պէյրութ, 1935ին)

մահը, որ պատահեցան, 9 Հոկտեմբեր 2003ին, Յիւրիսի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 14 Հոկտեմբեր, Յիւրիսի մէջ:

Ներկայիս ընդունիլ իբրեւ մահազգ:

ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ՉԱՅՆԸ

Այսօր Քալիֆորնիա նահանգը ցաւագին հանգրուան մը իր ետին ձգելու ընթացքին մէջ է: Երեքշաբթի օրուան ընտրութիւններուն ժողովուրդը իր խօսքը ըսաւ, եւ ամիսներ տեւած քաղաքական սակարկութիւնները, խաղերն ու ընտրապայքարի հետեւորութիւնները այլեւս վերջ գտած են: Գէթ կը յուսանք, որ վերջ գտան:

Մենք համաձայն չենք ներկայ նահանգապետը պաշտօնէ ետ կանչելու առաջարկին ու նախաձեռնութեան: Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնարարութեամբ այս ուղղութեամբ իր կեցուածքը ճշդած էր անհրաժեշտ հիմնաւորումներով: Սակայն ընտրութիւններուն ընթացքին նահանգի բնակիչներու մեծամասնութիւնը ըսաւ իր խօսքը: Հիմա նահանգապետի պաշտօնին ընտրուած է շարժապատկերի ծանօթ աստղ Առնոլտ Շվարցենկերը:

Օրինակելի պէտք է նկատել այն փաստը, որ ամիսներ տեւած ընտրապայքարէ մը ետք, երբ ամբողջակարգութիւնը եւ փոխադարձ մեղադրանքները օրուան նիւթերն էին, Կրէյ Տէյվիս քաղաքար ընդունեց իր պարտութիւնը եւ նորընտրի նահանգապետին իր շնորհակարարական խօսքին մէջ անոր վստահեցուց, որ փոխանցումը առաւելագոյն սահունութեամբ պիտի ընթանայ: Իր կարգին, Շվարցենկերը նոյնքան օրինակելի օրէն յարգալիք վերաբերում ցոյց տուաւ իր յարգանակի ելոյթին մէջ ու յայտարարեց, թէ իր փոխանցման խմբակին յանձնարարած է կատարել յարգալիք մօտեցում ցուցաբերել մեկնողներուն:

Թէ՛ Տէյվիսը եւ թէ Շվարցենկերը երեքշաբթի օրուան ընտրութիւններուն ստացան կամ վերըտացան այն պատգամը, որ իրենք հաշուետու են գիրքեր ընտրած ժողովուրդին: Առաջինը՝ պաշտօնէ հեռացուելով, երկրորդը՝ պաշտօնի կոչւելով: Տէյվիս լրջօրէն պէտք է անդադրուանայ, որ ժողովուրդը չափեց, կշռեց եւ իր խօսքը ըսաւ իր պաշտօնավարութեան մասին. արդար կամ անարդար: Իսկ Շվարցենկերը իր կարգին պէտք է խորհրդածէ, թէ որքան ծանր պատասխանատուութեան դէմ յանդիման կը գտնուի յաջգիւնք ընտրած ժողովուրդին:

Այս բոլորը ցոյց կու տան, որ ժողովրդավարական կարգերու մէջ ժողովուրդը հաշուի առնուելիք ամենէն լուրջ ազդակն է եւ կարելի չէ անոր կամքը շրջանցել: Հակառակ պարագային...

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԹԱՏՐՈՆ

ՍՓԻՒՌԲԱՀԱՅ ԲԵՄԱԴՐԻՉ - ԴԵՐԱՍԱՆ ԳԱԼՈՒՍՏ ՃԱՆՍԸՉԵԱՆ. ԵՐԵՒՈՅԹ ՄԸ

Ապրիլ Սփիւռքի տարապայման վիճակներուն մէջ, պետականութենէն զուրկ ըլլալ, չունենալ օրինակ որ ու տեւական նեցուկ՝ մեր մշակութային թէ կրթական կեանքը բնական ընթացքով տնօրինելու կամ պահպանելու... Այս մտահոգութիւնը կը վերաբերի սփիւռքահայ իւրաքանչիւր արուեստագէտի, մշակոյթին ծառայող մարդու, ան ըլլայ գեղանկարիչ, դերասան, բեմադրիչ, երաժիշտ, գրող կամ այլ մարդի ստեղծագործող:

Նորութիւն մը չէ մեր արտայայտածը, յստակ է ու պարզ: Ասիկա հետեւեալն է հայրենագրուել մեր ճակատագրին:

Այս հարցին շուրջ խորհրդածելով՝ նկատի կ'ունենանք այն նուիրեալները, որոնք ի գին մահէն զոհողութեան մշակոյթ կը պահեն Սփիւռքի մէջ՝ ենթակրկելով նիւթական եւ բարոյական գոհողութիւններու:

Չորեքշաբթի, 8 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջանային վարչութեան, «Յ. Տէր Մելքոնեան» հանդիսարանին մէջ Գալուստ Ժանսըգեանի ներկայացուցած «Արարատը եւ Յ» ԱՐՄՈՆՆՕ բեմադրութեան (մէկ դերասանով ներկայացում), ունեցանք հաստատ համոզումը, որ եթէ չու-



նենայինք «արագան խենթեր», Սփիւռքը շատոնց պիտի կորսուէր իր լեզուով, մշակոյթով եւ ազգային գիտակցութեամբ: Մարդ պէտք է ունենայ գորւաւոր կամք, անսահման նուիրում, գոհարեութեան անկաշառ ոգի, որ պէտք է գոյատեւէ, կարենայ շարունակել ապրիլ իրեն հայ:

Գալուստ Ժանսըգեանի ամփոփ կենսագրութիւնը հետեւեալն է. ծնած է Պէյրուտի, կեանքի ապագայը նետուած է կանուխ հասկանքով, դարձած է կինոնորու պարսպարդար, վարպետութեամբ կատարած է իր այս արհեստը, նոյն ատեն հետեւած է բեմի, Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբին մէջ հետեւելով թատերախումբին բեմադրիչ ժողով Սարգիսեանի թատերական դպրոցին: Ստանձնած է ռազմաթիւ դերեր մինչեւ իր գաղթը չէ պիտի Արեւմտի, ուր Պուլճինո Այլրէ մայրաքաղաքին մէջ իր կեանքը կը կապէ թատերական արուեստի բեմադրական ճիւղին՝ վիպալուծ Հեմմոյնէին: Միասնաբար կը կազմեն ընտանիք, կ'ունենան գաւազներ (իրենց կարգին շնորհակալ), միասնաբար կը բեմադրեն օտարազգի թէ հայազգի թատերադրանքներու թատերախաղերը՝ արժանանալով թատերասէր բազմութիւններու գնահատանքին, ծափերուն:

Բնակչութիւնը, ինչպէս հայրենիքը, Սփիւռքը եւ Յ-կոր Ղազանճեաններուն: Անոնց հետ կապը սերտացաւ, եւ Ղազանճեան արուեստագէտ բեմադրիչները եղան մնալուն բարեկամները ծանաղգեան ամուսին:

Հոկտեմբերի առաջին օրերուն (2003) Հայաստանի մէջ տեղի ունեցած Միւնխենի շրջանային արուեստի փառատօնին հրահրուած էր նաեւ Գալուստ Ժանսըգեան, ուր ներկայացուց «Արարատը եւ Յ» ներկայացուցչուհի, իրեն ԱՐՄՈՆՆՕ (ըսենք՝ մոնոլոկ): Արժանացաւ «Արտաւազ» շքանշանին: Բայց ասիկա առաջին գնահատանքը չէր: Երկու տարի առաջ, այս թուականին, ան յատուկ հրահրուելով կրկին այցելած էր Հայաստան, հոն ներկայացուցած՝ «ՆԱՆԷ» ներկայացուցչուհի, որ այս նոյն ներկայացումը ան ներկայացուց Արժանութիւններին հետ բերած խումբով նաեւ Պուլճ Համուտի «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ՝ արժանանալով մեր թատերասէրներու ծափերուն: Այդ օր անոր շնորհուցեց Համազգայինի Շրջանային վարչութեան յատուկ յուշամետալը:

Կարելի է երկար խօսիլ Գ. Ժանսըգեանի դերասան-բեմադրիչին շնորհներուն եւ անտեղիտալի կամքին, որ Գալուստ Ժանսըգեանի արուեստը օգտակարան հարուստ ոգեկանութեան մասին: Ու չփակած մեր այս վկայարկներով՝ յիշենք նաեւ, որ Գալուստ Ժանսըգեանի արուեստը, մինչեւ իսկ կը մեկնաբանէ Շարլ Ազնաւուրի երգերը՝ յաջողութեամբ: Մենք իր այս շնորհն ալ վայելած ենք նախապատեւածութեան օրերուն՝ Համազգայինի ընտանիքին կազմակերպած ընթերցութեան մտերմիկ հանդիպումներուն:

Սրտի պարտք զգացինք մեր այս տողերով հանրութեան յայն խաւերուն ծանօթացնելու այս իւրաքանչիւր, ինքնուրոյն վճռակամութեամբ հայու մշակոյթին ծառայող անխնայ տղան՝ անոր մարմնով յարատեւութիւն, հետաւոր Արժանութիւնի մէջ վստայահելու համար հայ արուեստին շահը:

ՇԱՀԱՆԳՈՒՄՏ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնում ներկայացնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միւլտի մը զիշեր, այնքան ատեն որ գալն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Շարք՝ էջ 8

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԸ (ԸՆԿ. ԿԱՐԴՁԵՍ ՍԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ)

Երէց սերունդի մեր հաւատաւոր ու զաղափարապաշտ ընկերներէն մէկը եւս կորսուցուցինք: Ընկեր վարդապետ Սարեան 40 օրեր առաջ փակեց իր աչքերը յաւիտեան, իր ետին ձգելով բազմապատկար զգրած, անշուշտ Գալուստի հարկանքները:



1930ին ծնած մեր ընկերը փոքր տարիքէն անդամակցած է Հ. Յ. Դպրատանական շարքերուն եւ Հ. Մ. Լ. Մ. ին, Քարանթինայի մէջ: Այն Քարանթինային, որ օրին մեր գաղութի բազմաթիւ կը համարուէր իրաւամբ: Ապա որով շրջան մը 1956-1962 հաստատուած է թրիփոլի, ուր տարած է ազգային-կուսակցական բեղուն գործունէութիւն: Օրին թրիփոլին եւս կը պարզուէր փայլուն վիճակ ազգային-կուսակցական առումով:

Սակայն ամէնէն աւելի, ընկ. Սարեան ծանօթ էր իր ընկ. Մար Միսայելի Տիգրան Մամուրի կրթութիւն երկար տարիներու հերթապահ: Իսկ Գալուստի կազմակերպչական գործերուն մէջ եւս ան ոգի ի բռնի ներկայ ու մասնաւոր գործունէ է, սակայն անշուշտ առանց խօսելու այդ մասին, լուռ ու մունջ, համոզումով, հաւատով:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն եւ մասնաւոր թէ՛ կուրդներու ժամանակ ընկ. վարդապետ այլ տեղ պէտք չէր փնտռէինք, բացի ակումբէն: Հոն էր ան, գիշեր - ցերեկ, գործին գլուխը: Ընտանիքի անդամները նուազ կը տեսնէին զինք, որքան իր ընկերները: Թէ՛ եւ սովորութիւն եղած է մեզի համար ընկ. «ակումբը մեր երկրորդ տունն է», սակայն շատերու պարագային անիկա առաջին տունը դարձած էր, ինչպէս ընկ. վարդապետին համար: Որ ժամուն մտնէր ակումբ, հոն էր մեր ընկերը: Եւ ասիկա երբեք պէտք չէր թարգմանել տարբեր բացատրութիւններով, այլ ազգին, կուսակցութեան նկատմամբ խոր համոզումով, ծառայութեան ամէնէն ազնիւ վարակցութեամբ:

Գաղափարապաշտ էր ընկեր Սարեան: Չէր կրնար ուղուել անուղղալ երեւոյթներ, մասնաւոր չէր հանդուրժար Գալուստի անհարկ տրամադրութիւնները: Մեր սկզբունքներուն նկատմամբ գերզգայուն, մեր համոզումներէն ոչ իսկ սանթրի մը զիշող, մարտունակ, յեղափոխական՝ բառին ամէնէն իսկական առումով: Մենք կրտսեր սերունդն ալ այսպէս անաչքանք ընկեր վարդապետ, որ իր պատկառելի, լուրջ ու խիստ արտաքինով ոչ միայն յարգանք կը պարտադրէր մեզի, այլեւ բոլորին, նոյնիսկ մեր հակառակորդներուն:

Այսօր չկայ մեր ընկերը, սակայն կը մնայ իր տիպար բոլորիս մտքին մէջ: Թէ՛ եւ փոխուած են ժամանակները, վարակելիքները, գործելաձեւերը, հասկացողութիւնները, սակայն աւելի քան երբեք կենսական է զիջազի մեր ԳՈՐԾԻՆ նկատմամբ անխախտ համոզումը, ազգին ու կուսակցութեան նկատմամբ անբացատրելի սէրն ու գուրգուրանքը, որոնց համար ընկ. վարդապետն ու անոր սերնդակիցները իրենց կենդանի գործով կը մնան բոլորիս ներշնչման աղբիւրն ու օրինակելի դաշնակցականները:

Վարձք կատար, ընկեր վարդապետ, ննջ՝ հանգիստ ու խաղաղ:

ԸՆԿԵՐ ՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

100 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՍՓԻՒՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հայաստանի կառավարութիւնը այս տարի պետական պիւլտէճէն 100 միլիոն դրամ յատկացուցած է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան՝ Սփիւռքի կրթական հաստատութիւններուն օժանդակելու համար: Նախարարութեան Սփիւռքի բաժնի պետ Հրաչ Թադեւոսեանի համաձայն, վերջինս գումարէն 70 միլիոն դրամ յատկացուած է դասագիրքերու եւ Սփիւռքի դպրոցներուն համար անհրաժեշտ կրթական եւ այլ նիւթերու տպագրութեան: Անկէ զատ, Սփիւռք պիտի ուղարկուի նաեւ Հայաստանի գիտնական, դրօշ եւ օրհանգի, ինչպէս նոյնպէս կարիքը ունին կրթական օժանդակները:

Հ. Թադեւոսեան ըսաւ, որ այս տարի նախարարութիւնը նախապատրաստած է 60 միլիոն դրամի 71 դասագիրք, ինչպէս նաեւ՝ ուսումնամեթոտական գրականութիւն, քարտէսներ եւ հայոց լեզուի ինքնուսուցիչ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՀԱՐԼ ԱՋՆԱՒՈՐԻ «ԱՌԱՋԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԺԱՄՆԱԿԸ»

ՅՈՒՆԵՍԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՈՒ ԵՐՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵ ԵՏԵ ՓՐԱՆՍԱՀԱՅ ՆՆՆԱՆԵՐ ԵՐԳԻՉ ՇԱՐԼ ԱԶՆԱՆԸՐ ԱՆԿՈՒՄԱՆ ԵՎ 60 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ 71 ԴԱՍԱԳԻՐԵ, ԻՆՉՊԱՅՆ ՆԱԵՎ՝ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՔԱՐՏԵՍՆԵՐ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԻՆՔՆՈՒՍՈՒՄ:

Իր գիրքին մէջ Շարլ Ազնաւուրը կը խօսի Փրանսիական երգի «ոսկե-Փրանս» մասին, երբ Փրանս կարկառուն երգիչներու փայլուն համաստեղութիւն մը տուաւ աշխարհին: «Իմ խնդիրս ոչ միայն այն էր, որ հաղորդէի իմ սեփական գործունէութեան վերելքներուն եւ անկումներուն մասին, այլ այն մասին, որ նկարագրէի այն իրադարձութիւններուն պատկերը, որոնց ականատեսն ու մասնակիցը եղած եմ», կը

նշէ Ազնաւուրը:

ՅՈՒՆԵՍԿՈՒՄՆԻ ԼՈՒԻՍ ԵՎ ՎԵՐԱՆԵՐԻ ԾՆՆՆՆԵՐՈՒՆ 100ԱՄԵՆԱԿԻՆ

Միացեալ Նահանգներուն մէջ հայկական երաժշտութեան մրցանակաբաշխութիւն կազմակերպող «Արմինիոն» միւլտիմեդիա կազմակերպութեան ու Հայաստանի յորինողներու եւ երաժշտագէտներու միութեան նախագահ յորինող Ռոպէրթ Ամիրխանեանի նախաձեռնութեամբ կը կազմակերպուի միջազգային մրցումները: Համերգի առաջին մասին մէջ սփիւռքահայ երաժիշտներու կատարողութեամբ հնչած են մեծանուն յորինողի ստեղծագործութիւնները, իսկ երկրորդ մասին մէջ Ռ. Ամիրխանեանի կատարողութեամբ հնչած են իր իսկ ստեղծագործութիւնները: Համերգին նաեւ մասնակցած է երգչուհի Սեդա Ամիր-Կարաջեան, Երեւանէն, իսկ Ռ. Ամիրխանեանի «Կարօտ» եւ «Այնպէս ուզում եմ» երգերու կատարումով հանդէս եկած է կրեմլ մրցանակի կրկնակի դափնեկիր ամերիկացի երգիչ Ճերի Պէյլ:

«Սփիւռքը իր մշակութային հիմնական կողմնորոշումները պահելու համար կարիք ունի աւելի նպաստակալին գործունէութեան, որովհետեւ երկրորդ շրջանի միջին տարիքի, որ հակառակ էր արեւմտեան երգի «ոսկե-Փրանս» մասին, երբ Փրանս կարկառուն երգիչներու փայլուն համաստեղութիւն մը տուաւ աշխարհին: «Իմ խնդիրս ոչ միայն այն էր, որ հաղորդէի իմ սեփական գործունէութեան վերելքներուն եւ անկումներուն մասին, այլ այն մասին, որ նկարագրէի այն իրադարձութիւններուն պատկերը, որոնց ականատեսն ու մասնակիցը եղած եմ», կը

Advertisement for the Babilos Institute for Technical and Vocational Education. It features the institute's logo, the name in Arabic 'معهد بابلوس للتعليم المهني والتقني', and a list of services in Arabic: BT (Bakaloriya Feniya), TS (Imtiyaz Feni), TDS (Tecnologia al-Akhtصاص). It also includes contact information: 'فرن الشباك - سنتر أبراج 01/292517', 'حارة حريك - طريق المطار 01/273813', 'الدورة - بناية الضمان 01/894100', and 'عين زحلتا - الشوف 05/230 400'. At the bottom, it says 'كن واحداً منهم للمراجعة والتسجيل'.



Գրական Էջ

ԹՐԻ ԴԷՄ ԳՐԻՉ

ԹԱՐԳԱՆՉԱՑ ՏԵՍԻԼՔՈՎ

Հարկ կա՞յ բիւրերորդ անգամ կրկնելու արդեօք, որ եթէ յաջողած ենք բարձրանալու դուրս գալ պատմութեան դաժանագոյն բնութիւններէն, պարզապէս շնորհիւ այն հոգեմտաւոր արժեքներուն, որոնք միշտ ալ մեզ վահանած են Լոյսին, Գեղեցիկին եւ Գաղափարին անպարտելի գորութեամբ: Պէ՞տք է անլցնել անմիջապէս, որ մեր աչիցն ու ձայնին մահ ու սարսափ փոթորկած հսկայ կայսրութիւնները երբ կ'երթային իրենց հիմերէն, մենք ամենակալ փոթորիկներուն կը պատասխանէինք «Մահուամբ զմահ կոխելու» եւ վերապրելու այն հրաշագործ գորութեամբ, որուն ոգեղէն ուժին մայր ազգիւրը մշակոյթ կոչուած կենսաբաշխ հրաշքն է անտարակոյս:

Դարեր շարունակ, երբ Տիգրանն ու Բիւզանդիոնը ասպարէզ կը կարողային մեր հայկեան էութեան, երբ ձուլման վտանգը առաւել սաստկութեամբ կը սպառնար մեր ինքնուրոյն գոյութեան, երբ մեր վանքերն ու տաճարները հրոյ ճարակ կը դառնային, բերդերը կը կործանէին եւ շէնքերը կը դառնային անմարդաբնակ մեռելատաններ, հայ ժողովուրդը կ'ապաւինէր այն ոգեղէն բերդերուն ու գաղափարի տաճարներուն, որոնք հիմնաքարն ու կարողիկէն մշակոյթ բառով սահմանող անփոխարինելի կենաց աղբիւրն է:

Հայութեան ազգային դիմագիծի պայծառացման, հոգեկան ազատագրումին եւ իմացական ծաղկումին հիմնասիւնը ամրապնդողներն էին հայ ժողովուրդի գիտակցութեան կամքին մէջ, հինգերորդ դարուն, երբ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ հայրապետի եւ անոնց ճոյնքան անձնամոռ աշակերտներուն ամբողջական նուիրումով ո՛չ միայն հայեթեայն հնչեցին եւ կերպ ստացան Աստուածաշունչն ու եկեղեցական, իմաստասիրական, պատմագրական եւ այլաբնոյթ գոհարներ, այլեւ հիմը դրուեցաւ մեզ առաւել մեզազնող ազգային գրականութեան:

Եւ զարմանալի չէ, որ Հայկական Ոսկեդար կերտած նուիրելները նախնայեցան Թարգմանչաց սերունդ անուանով, որովհետեւ Աստուածաշունչը ազգայնացուցած է մեր մշակոյթին դիմաց յաւերժութեան կոյս հորիզոններ լայն բացած այս սերունդն էր, որ հիմը դրաւ օտարին յաւերժական արժեքները ազգայնացնելու անհրաժեշտ, մեր լեզուն օժտեց դասական բիւրեղութեամբ, լեզուական եւ ոճային ինքնուրոյն արտայայտչաձեւերով, որոնք հայ մտքին դիմաց խորհրդաձեւերու եւ խորանալու, մտածելու եւ ստեղծագործելու նոր ուղիներ բացին եւ հայ գրականութեան գանձարանը հարստացուցին համայն մարդկութեան պատիւ բերող իմացական ու գեղարուեստական անկրկնելի գուլիս (-) գործոցներով:

Աւելի ինչ. մշակութային եզակի շարժում հանդիսանալով հանդերձ՝ Թարգմանչեցներուն ամբողջական նուիրումով նուանուած գործն ու որակը նաեւ քաղաքական բովանդակութիւնն ու շեշտ ունէին: Փաստօրէն առաջին անգամ էր մեր պատմութեան մէջ, որ հոգեւոր դասը, հայ մտաւորականութիւնը եւ աշխարհական դեկալարութիւնը հայ հոգիի ազատագրման եւ ուժեղացման առաջին միացեալ շարժումը կը գլխաւորէին՝ Գրեթու Գիւտէն առաջ գոյութիւն ունեցած ազգային արժեքներէն եւ անհոյսութիւններէն հաւաքական գիտակցութեան եւ յանձնարարութեան մակարդակին բարձրանալու առաջադրանքով:

Տակաւին, Թարգմանչաց շարժումը իրաւամբ եղաւ հայութեան հոգին շեղափոխող, միտքը պայծառացնող եւ մկանները ջրդեղող իմացական, բարոյական եւ ազգային ազատագրումի առաջին կազմակերպ փորձը, որուն շքեղագոյն արտայայտութիւնը պիտի հնչէր հայութեան գոյատեւելու ուխտը կենդանի գործը թարգմանած Վարդանանց ապստամբութեամբ:

Այս ոգին, հայ լեզուի եւ մշակոյթի արժեքներով հայութեան ազգային էութիւնն ու նկարագիրը պողպատելու, գայն շարունակ Մեծաքանչիւն վերանորոգ հնչեղութեամբ հարստացնելու հաւատամքը չի կրնար հեռու մնալ մեր ներկայէն: Գիրքն եւ գրականութեան ժողովուրդը ենք: Պայքարի եւ խիզախութեան խիզախ դասերու եւ մշակոյթի ժառանգորդներ: Գոյատեւեցիմք Թարգմանչաց հաւատքով եւ մեր ազգային լինելութեան յաղթագնաց երբը պիտի շարունակենք ամբարակել Թարգմանչաց սերունդին անպարտելի վեռակամութեամբ, հաւատքով, տեսիլքով:

Այս է պատգամը Թարգմանչաց սերունդին:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Եւ Մաշտոցն էր, որ փլատակուած մեր հատի տեղ հաստատեց նոր հաւատ, հաւատ, որ մեզ համար հազուադէպ չհարձաւ, այլ մէջը պնդող զօտի: Հողմացրիւ արուած մեր հին մշակոյթի տեղ նա սկզբնաւորեց մի նոր մշակոյթ, որ պիտի գլուխ-գործոցներ տար համաշխարհային քաղաքակրթութեանը՝ Զուարթնոցի տեսքով եւ Նարեկացու հոգով, Շիրակացու անգէն եւ Համբարձումեանի գիտական աչքերով: Կոմիտասի ականջով, որ պիտի փոխանցուէր խաչատրեանին, Թորոս Ռոսլինի մատնեցով, որ պիտի ժառանգէր Մարտիրոս Սարեանը, Սայաթ Նովայի բարբառով, որ պիտի լեզու դառնար Չարենցի բերանում: Անիով, որ պիտի վերածուէր Երեւանի...:

Այդ նա էր, որ մեր անգիր բանարուեստի փլատակների վրայ հիմնադրեց մեր դպրութիւնն ու բերթութիւնը. գողթման լեզուած երգիչների տեղ հնչեցրեց մեր հոգեւոր մեղեդիւն. հեթանոսական անգիտութեան տեղ փռեց գիտութեան հեթանոսական սփռոցը, որի վրայ մեզ պիտի կերակուր տային մեր հոգեւոր մատակարարները խորենացուց ու Դաւիթ Անյաղթից մինչեւ Տաթևացի ու Գոշ, մինչեւ Ալիշան ու Նալբանդեան, մինչեւ Արեղեան ու Աճառեան, Օրբելիներ ու Ալիխանեաններ...:

Այդ նա էր, նորից եւ դարձեալ նա, որ մեր լեզուն հանեց այն աննախանձելի վիճակից, ինչ ունենում է աղքատ ազգականը իր մեծատուն բարեկամների տանը: Արդէն միայն Աստուածաշունչի թարգմանութեամբ հայոց լեզուն կատարեց իր փառասունը՝ ապացուցելով, որ ի գորտ է լիապէս արտայայտելու ինչպէս պատմութիւն, այնպէս էլ օրէնսդրութիւն, հրապարակախօսութիւն, այնպէս էլ բանաստեղծութիւն, ինչպէս բուսական ու կենդանական աշխարհ, այնպէս էլ երեւակայութիւն-տեսիլք եւ կանխատեսութիւն-մարգարէութիւն, որովհետեւ հին երբայեցոց «Սուրբ Գիրքը» իսկապէս մի Ամենամատեան էր գիտութեան եւ արուեստի բազում բնագաւառները:

Այդ նա էր, դարձեալ ու վերստին նա, որ այս ամէնով ծանօթացրեց մեզ, տուեց ինքնաճանաչում, անվստահութեան տեղ դնելով ինքնավստահութիւն, բայց ոչ յանձնասպանութիւն. յուսահատութեան տեղ յուսալքութիւն, բայց ոչ կարճատեսութիւն, հաւատա-



բեկութեան տեղ հաւատ, բայց ոչ ինքնակուրթիւն, ինչպէս նաեւ՝ Քանակի դէմ՝ բեւ, Թուի դէմ՝ բոխք, Արեան դէմ՝ քանաք, Թրի դէմ՝ գրիչ եւ դարանի դէմ՝ Մատենադարան...:

Առանց այդ ինքնաճանաչման եւ ինքնավստահութեան, առանց այդ լոյսի եւ հաւատի, առանց դոյզն այն նոր գէնքի, որ կոչուում էր գրիչ, չէր կարող լինել ո՛չ Աւարայրը, ոչ էլ Քաղկեդոնը, ինչպէս որ անհնարին է կոռել դեռ չարթնացած, եւ պատասխան տալ չմտածած:

Ահա թէ ինչու Մաշտոցն է իսկական հեղինակն ու կազմակերպիչը մեր քաղաքական պայքարի երկու բախտորոշ յաղթանակների՝ ո՛չ միայն գրերի գիւտի, որի շարունակութիւնն էր Աւարայրը, այլ նաեւ Դուրնի ժողովի, որ պիտի Քաղկեդոնին ասէր՝ «Ոչ»: Ահա թէ ինչու Մեսրոպն է մեր մեծագոյն եւ անբաղդատելի քաղաքագէտը...:

Մաշտոցը, անտարակոյս, հանձնարեղ լեզուարան էր, անմրցակից հետախոյզ հնչիւնա-

կան այն բարդ համակարգի, որ ունի եւ ունեցել է մեր լեզուն:

Մաշտոցը նաեւ մեծ երաժիշտ էր: Եւ այս ասուում է ոչ լոկ այն իրաւունքով, որը մեզ տալիս է պատմագրութիւնը՝ վկայելով, թէ «նախ սուրբն Իսահակ (Սահակ Պարթեւ) եւ սուրբն Մեսրոպ ասացին գուրբն եղանակաւոր ձայնն եւ գերկու ձայն ստեղիս... եւ սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան»:

Առանց այս պատմական փաստի էլ Մաշտոցի երաժիշտ լինելը վեր է ամէն տարակուսանքից: Առանց երաժշտական շատ սուր ականջի, առանց նրբին լսողութեան անկարելի էր (եւ այն էլ առաջին անգամ) տարբերել ու տարբերակել թէկուզ եւ բաղաձայնական եռաշարքը (ծ-ց-ձ-ճ-ջ-ը, եւ այլն), ինչպէս որ այսօր էլ այդ հնչիւնների տարբերութիւնը որսալ կարող է այն օտարագրի միայն, ով երաժշտական սուր լսողութեամբ է օժտուած:

Այո՛, Մաշտոցը մեծ լեզուաբան էր եւ երաժիշտ:

Բայց այս չէ զլիսաւորը: Մաշտոցի բուն նպատակը ոչ թէ հերքական մի այրուբենի ստեղծումն էր իր ժողովրդի համար, այլ մի բոլորովին ուրոյն, բոլորովին նոր, գուտ հայկական այրուբենի ստեղծումը: Նոյնիսկ այն դէպքերում, երբ նա վերցրել է որեւէ գիր, ապա դա վերափոխել է այնպէս, իր նախատիպից հետագրել այնքան, որ մինչեւ հիմա էլ այդ նախատիպը որոշելիս գիտութիւնը չի կարողանում խուսափել վէճից:

Յունարէնի հնչիւնական համակարգում չեղած հնչիւնների համար Մաշտոցը չի վերցրել ուրիշ այրուբենների համապատասխան գիրը, այլ ինքն է յորինել եւ այն էլ իր իսկ հնարած տառերից:

Հեռանալ նմանութիւններից, ընդգծել տարբերութիւնները՝ սրանք հասցնելով մի բոլորովին նոր որակի, - ահա այն սկզբունքը, որով առաջնորդուել է Մաշտոցը եւ հասել է սկզբունքի կատարելալ իրագործման: Այդ կերպ նա ստեղծեց մի Այրուբեն, մի գուտ հայկական Այրուբեն, որ տարբեր է թէ՛ իր ժամանակի, թէ՛ հետագային միւս բոլոր այրուբեններից:

Սոսկապէս կարող է գործել ո՛չ սոսկ տառաստեղծը, ոչ էլ մեծ լեզուաբանն անգամ. այսպէս կարող էր գործել միայն մեծ քաղաքագէտը:

(Հատուած)

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԿ

ՓԱՌԱԲԱՆԱՆՔ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ

Պզտիկ լուր մը, որ հաճոյք մը կը պատճառէ ինձ: Զուարթութեամբ տուն կը վերադառնամ: Երբեմն ցատկելով ու խնդալով ինքս ինձ վրայ, երջանկանալով:

Ամերիկայի «Հայրենիք» էն է լուրը: Երեւանի մէջ, բարեփոխած են ուղղագրութիւնը, վերահաստատած են գրեթէ բոլոր ձայնաւորներուն նախկին արժեքները:

Հայոց լեզուն, որքան կը սիրեմ քեզ: Ոչ մէկ աղբիւր երկրի վրայ կրնայ պարծենալ թէ այդքան խանդաղատանք, այդքան գորով, այդքան աղապատանք ստացած է ինձմէ: Հաւատարմութիւնը, որ կը զգամ քեզի հանդէպ՝ աւելի զօրաւոր է քան մեր այս եղկելի կեանքը: Կ'ուզէի քեզ սորվիլ, մինչեւ վերջին վայրկեանը, - քու յետին շեշտերդ ու քու յետին բառերդ: Գուններքին երաժշտութիւնդ ու քու գծած ճամբար՝ պատմութեան մէջ: Դուն, որ մեր աղօթքն եւ ու մեր հաճոյքը, - Հայոց լեզու, կը սիրեմ քեզ:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՀԱՅ ԼԵՁՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհի շորս ծագերուն, Ուր կը ստնէ ամէն հայ իրքի տանտէր հարազատ, կը ստանայ սէք ու սընունդ, սըրտի հրապարտ ցնծութիւն եւ բորեանէն ու բուրէն հոն կը սընայ միշտ ազատ:

Քանի՞ դարեր եւ քանի՞ ճարտարապետ հանճարներ Աշխատեցան անոր տալ վեհութիւն, զեղ ու պերճանք. Քանի՞ գեղջուկ բանուորներ տընեցան տիւ եւ գիշեր, Որոնք թաղուած են հիսմ սոռաւորեան մութիւն տակ:

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւէ դարէ դար, իր ճարտարներ՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վա՛ն, Բարիքներով անըսպար լեցուն՝ ամբարն ու մատան:

Հո՛ն է սիւսն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին խաժամուծին մէջ օտար կորսնցուցած իր հոգին, Անցեալն անհունն է ներկան, Այնքան սըրբի՛ն ապագան...

Մ. ԻՇԽԱՆ

ՄԵՐ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԳԱՆՁԸ

Ուխտատեղիներու, հրապարակներու վրայ բաշխուող անսպասելի մատաղ է մեր լեզուն: Բազմութիւններ կու գան, կու գան ու կը կշտանան եւ անիկա միշտ կ'աւելնայ, կը յորդի:

Գողթման գաւառի հին գինի է մեր լեզուն, միւռնոնով, խունկով, մանանայով ու հազարուկով ծաղիկներով առիւ...: Կարաս, Կարաս

գինի է ան, ետուն ու պղպղուն աշուղներու տաք ու կրակ երգերով... Ու մերթ նման է մեր լեզուն արքայական գանձի մը, ուր ոսկերիչներու անմահ գունդեր կ'աշխատին գլխահակ:

Այրուծիներ կը վագեն մեր լեզուին մէջ, դրօշակներ կ'անցնին անոր կամարներէն, գունազեղ գէնուզարգեր կը փայլին, արքայական զօրահանդէսի մը մէջ:

Մեր լեզուին թագաւորը բանաստեղծն է: Արդար է մեր լեզուն, ճարտար է մեր լեզուն: Խորունկ է մեր վիհերուն չափ, բարձր է մեր լեռներուն չափ, պայծառ է մեր երկնքին չափ:

Արարատէն մինչեւ երկինք անտուած աղամանդէ սանդուխ է ան, որուն մէկ աստիճանին վրայ անչէլ կանթեղներ կը վառին եւ հրեշտակներ հսկում կը կատարեն...:

Թեւեղող եւ ծփուն ծով է մեր լեզուն... Հայ լեզուի մշակներն ու մոգերը այդ սանդուխով է, որ կը բարձրանան անմահութեան, արքայութեան:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՅԱՆ

ՍԻՐԵՐԳ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ

Իմ հայ՛ լեզու, սուրբ եւ դուռն լշտիւնդի բառին պէս. Հայաստանի ժայռի պէս՝ դուռն խորարմատ եւ տոկո՛ւն, Դու անարա՛տ ու վա՛ն ես՝ Արարատի ձիւնն ինչպէս, Ո՛վ հայերէն. «հայ» անուան պէս անո՛յ՛ չ եւ անհո՛ւն:

Երեւանի քաղաքին պէս շքե՛ղ եւ, շէ՛ն եւ դուն, Դուն հնչեղ եւ, հայ՛ լեզու, հայուն սրտի տրոփին պէս, Հայ շրթունքի ձայնին պէս վառն ու շա՛ղթօրէն կարկաչուն, Արարատեան հողին պէս՝ դալա՛ր եւ միշտ, հարո՛ւստ ես:

Համե՛ղ եւ դուն, հայ՛ լեզու, Աբովեանի բերնին պէս, Եւ Քուչակի թառին պէս՝ թիթեռնօրէն դուն թրթռո՛ւն, Դուն հօգ՛ր եւ գրչի պէս վարմութան հայալեզ, Սասունցիի հոգւոյն պէս եւ դուրսին պէս եւ բոցո՛ւն:

Աշուղներուն քնա՛րն եւ, սիրանուա՛գ իմ լեզու, Սօսանտառի սօսա՛փն եւ, Սեւանի ծո՛ւփը ծափուն. Ռազմիկներուն շեփո՛րն եւ, իմ հայ լեզու՛ն ուղղաբոց, Յորե՛նն ոսկի Շիրակի, գինի՛ն Գողթման կոյզերուն:

Դուն կենդանի՛ ես՝ քանի՛ կան հայկական կենդանի. Քանի՛ կանթեղն հաւատքի կը վառի հայ կուրծքին տակ, Քանի՛՝ Մասիսն երկրի վրայ կը ծածանի, կը ծաղկի, Քանի՛՝ հազար սուրի դէմ, հազար հարի հակառակ՝

Անյաղթ կ'ապրի՛ Հայ Հոգին՝ պիտի հնչես, Հայ՛ Լեզու...

ԺԱԳ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԵՊՏԻՄԵՐ ԵՆԿՆԵՐԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Նշան Մայր...

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Էջրեֆիելի Ս...

ՎԱԶԷ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Ջալալյանի Հայ կաթողիկե Ս...

ՎԱՐԴՈՒՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Նոր Սիսի Ս...

ՍՈՒՐԵՆ ԶՈՐԾԻԿԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս...

ՎԱԶԱԳՆ ԿԱՐԱՊԵՏ ՆԱԾԱՐԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս...

ԳՈՒՐԳԵՆ ՅԱԿՈՒԲ ՏԱԳԵՍԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս...

ՈՒՋԱԼԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Ժեռապետի Հայ կաթողիկե Ս...

ՏԱԼԻ ՍՈՒՊԱՅԵՏԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Ջալալյանի Հայ կաթողիկե Ս...

ՅԱՐՈՒԹԻՆ ԼՆԱՆՃԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Ս...

ՄԱՐԻ ՏՈՒՏԱԲԵԱՆԻ ՄԱՐԿԱՆԳԻՆ ԱՊՐԵԼԻՅԻՆ ԿՈՄԻՏԵ... 12 Հոկտեմբեր 2003, Էջրեֆիելի Ս...

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5563 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1 2 3 4 5 6 7 8 9 10 11
ՎՈՐՈՒՋՆԱԿԱՆ ՈՒՂԱՎԱՅՆԱՅ

- 1. Ուշացում - Այրուբե-նէն:
2. Կաղապար - Գոմ:
3. Խոհանոցի սպասնե-րէն - Գոյական:
4. Կրկնուած քաղա-ձայններ - Անմիջապէս:
5. Գիտակցութիւն - Յուշանկար:
6. Չար ոգի - Իսկան-բայ - Համադասական շաղկապ:
7. Տառի մը անունը - Չտոց - Յուշական ան-կան:
8. Նշանակութիւն - Ունջ:
9. Նշանաւոր որդրամո-լը - Խոնգարկու:
10. Գծնիկ, ժողովներ - Ազգաւի ձայն:
11. Փառութիւն - Սիկիլ-եան հրաբուխ - Այրուբե-նէն:

ԹԻԻ 5562 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ
1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1 2 3 4 5 6 7 8 9 10 11

100 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՍՓԻԻՌԻԻ...

Շարունակուած՝ 4րդ էջէն

դրամ շահելու միտումով տարեբային համերգային ծրագիրները անդառնալի ձևով կը քանդեն մեր հայ-րենակիցներուն մշակու-թային հոգեբանութիւնն ու հոգեւորի ծարաւը...», ու շեշտեց Ռ. Ամիրխանեան:

ՍՐՏԱՆՕԹԱՅԻՆ ՀԻՒՆԳՈՒԹԵԱՆՅ ԹԻԻԻ ԱԾ

Հայաստանի մէջ սրտանօթային հիւանդու-թիւններուն թիւը աճած է: Այս տեսակի հիւանդու-թիւնները նաեւ երիտա-սարգացած են, սակայն ասիակ խնդիր է ո՛չ միայն Հայաստանի մէջ, որովհե-տեւ հիւանդութեանց թիւի աճի միտում կայ նա-եւ նախկին խորհրդային եւ Արեւելեան Եւրոպայի երկրներուն մէջ:

Այս նիւթին շուրջ վեր-ջերս Հայաստանի Առող-ջապահութեան ազգային հիմնարկին մէջ տեղի ու-նեցաւ Հայաստանի սրտա-բաններուն 4րդ ստորվճ, որուն ընթացքին լրագ-րողներուն հետ ունեցած գրոյցի մը ժամանակ Հա-յաստանի սրտաբաններու ընկերակցութեան նախա-գահ եւ Հայաստանի առողջապահութեան նա-խարարութեան սրտաբա-նութեան հիմնարկի տնօ-րէն ակադեմիկոս Կարլէն Աղամբան ըսաւ, որ հիւանդութեան մակար-դակը իջեցնելու համար անհրաժեշտ են պետական մակարդակի ծրագիրներ, մեծ ներդրումներ եւ յա-մառ աշխատանք:

4. Աղամբան օրինակ բերաւ Միացեալ Նահանգ-ներու փորձը, երկիր մը,

ուր համակարգուած ծրա-գիրներու միջոցով կարե-լի եղած է սրտանօթային հիւանդութիւններու պատճառով արձանագրու-ած մահերուն թիւը իջեցնել 67 առ հարիւրով:

Ըստ Կ. Աղամբանի, ասիակ երկարատեւ գոր-ծընթաց է մինչեւ իսկ պե-տական ծրագիրներու առ-կայութեան պարագային հիւանդութիւնները եւ մահերը կարելի է տարե-կան իջեցնել առաւելա-գոյնս 2,5 - 3 առ հարիւ-րով:

ՔԱՉԱՐԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի կառավա-րութեան որոշումով Զան-գեզուրի պղինձի եւ մո-լիպտէնի գործարանի շա-հէն 100 միլիոն դրամ յա-կացուած է Բաջարան քա-ղաքի բարեկարգումին համար: Տրամադրուած գումարով արդէն սկսած են քաղաքի փողոցներուն վերանորոգման աշխա-տանքները:

Ըստ Բաջարանի քաղա-քապետարանին, ամբող-ջովին պիտի բարեկարգը-ւին քաղաքին Լեռնա-գործներ, Արովեան եւ Չարենց փողոցները: Յա-ռաջիկային ճամբաներու շինարարական աշխա-տանքներ նախատեսուած են նաեւ Շահումեան եւ Շիրվանզատէ փողոցնե-րուն, ինչպէս նաեւ Գե-տափնեայ թաղամասին մէջ: Կը ծրագրուի նաեւ վերանորոգել քաղաքի գե-րեցմանոց տանող ճամ-բան:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ) Կամաց-կամաց, քայլ առ քայլ պիտի ունենաք խնա-յողութեամբ շահուած գումար մը, ինչ որ պիտի ու-րախացնէ եւ շոյէ ձեր հարգատեւերը, նաեւ՝ ձեզ: ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Անծանօթ մը ձեզի պիտի ընծայէ ծաղիկներ. ասի-կա կը պարտիք ձեր հմայքին երգործութեան: Պար-գապէս եւ իրաւամբ հմայիչ էք այսօր: ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 23 Յունիս)

Այսօր պիտի ունենաք յորդու եռանդ, ու ձեզի հետ այս խնդութիւնը պիտի զգան ձեր հարգատեւերը, հա-մաձայն պիտի ըլլան ձեր փափաքին: Օրը պիտի ըլլայ շատ կենսունակ եւ արդիւնաբեր: ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ձեր բարեկամները հրաւիրեցէք ճաշի կամ գուարք ընթրիքի: Երկար ատենէ ի վեր այսպիսի համախմբը-ւած մթնոլորտ չէք ունեցած: Օրը պիտի անցնի հա-մեմուած: ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Եթէ գործ կը փնտռէք, պիտի ենթարկուիք ձեր շրջապատին այն մեղադրանքին, թէ լրջութեամբ գործ մը չէք փնտռեր: ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Եթէ զգաք, որ անարդարութեան մը զոհն էք, մի՛ վարանիք բողոքելու առ որ անկ է եւ պաշտպանելու ձեր իրաւունքը: Ոչ որ թող կարծէ, որ դուք ասոր-անոր հեզմանքին աւարկան էք: ԿԵՐԻՌ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Եթէ կը կասկածիք ուրիշներուն ձեր նկատմամբ ու-նեցած համակրանքին, այսօր ապահով պիտի ըլլաք, եթէ սիրուած էք: Կասկածամտութիւնը հիւանդութիւն է, գայն հետազոտէք: ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Անձի մը կողմէ, ձեզի նկատմամբ տածուած գուր-գուրանքը եւ անոր հետ կիսած ձեր կեանքը կը նկա-տէք անբաւարար սիրոյ մարզին մէջ: Բայց հաւատա-ցէք, որ արժանացած էք անոր խոր սիրոյն: ԱՆԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ճիշդ ժամանակը եկած է, որ միջոցառումներու դի-մէք՝ բարելուելու համար ձեր առողջութիւնը: Դիմե-ցէք բժիշկի մը խորհուրդին: Մի՛ տնտնաք, որպէսզի ետքը չզոջաք: ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Շատ հաշտ ու պիտի կենակցութիւն մը պիտի ու-նենաք ձեր սիրելիին հետ: Պիտի տաք կարեւոր ծրա-գիրի մը որոշումը՝ երկար ժամանակի վրայ տարուած: ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)


Կ'ուզէք օգտակար ըլլալ ձեր շրջապատին: Կը տա-րութեք կարօտի զգացումներուն մէջ: Մտածեցէք ձեր ապագային մասին ու եղէք իրատես: ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Սիրային մթնոլորտի մէջ սքանչելի շաբաթավերջ մը ձեզ կը սպասէ: Գացէք վիպային վայր մը, ուր պի-տի կարենաք ամրացնել ձեր սէրը:

ՕՐԱՏԵՏՐ

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ՓԱՌԱՍՕՆ

ՓԱԹՐԻՔ ՖԻՈՐԻ «ԵՌԻՆԵՍՔՕ»Ի ԲԵՄԱՀԱՐԹԱԿԻՆ ՎՐԱՅ



Մեծ ժո-ղովրդակա-նութիւն վա-յելող ֆրանս-սացի եւ հոր կողմէ հայ երգիչ Փաթ-րիք Ֆիորի այսօր միակ էլոյթով մը պիտի ներ-կայանայ յի-բանանցի իր համակիրնե-րուն: Երի-տ ա ս ա Ր Պ արուեստա-գէտը, որուն երգահան-դէսը տեղի պիտի ունե-նայ երեկոյ-եան ժամը 8:30ին, ԵՌ-Ե Ս Ք Օ ի մէջ, թէեւ երաժշտա-կան հրա-պարակ մուտք գոր-ծած է պատանի հա-սակին, սակայն յայն-ձայն ինչ որ 1999ին ընտրուեցաւ տարուան թուականներուն: Իր ունեցած էլոյթները եւ յատկապէս 1998ին, Լիւք Փլա-մնտոնի եւ Ռիչըրտ Քոչիանթի «Նոթր Ծամ տը Փարի» շարք մը ձայնապնակ-ներ, ինչպէս՝ «Ժիւք

իւն ոչկոն ան-քոր», «Բը թիւ ուրվիէն», «Էլլ է», «Բրիսա-լիր» եւ այլն: Անոր վերջին ձայնապնակը՝ 2002ին հրա-պարակուած «Մարսէյ»-ը, ձօնուած է ար-ւեստագէտին ծննդավայրի՝ Մարսէյի: Այս ձայնապնակին պար-փակած տաս-ներկու երգե-րէն եօթին յօ-րինումը կը պատկանի ար-ւեստագէտին: Փաթրիք Ֆիորի կատարած է նաեւ «Մու-լան» եւ «Տը փրիս» աֆ-ժիփի» կեն-դանի գծանկարնե-րուն ֆրանսական տարբերակներուն երգեցողութիւնը:

Երոպայի տա-րածքին եւ բազմա-թիւ այլ երկրներու մէջ երգահանդէս-ներ մատուցած Փաթ-րիք Ֆիորի ունի հա-մերգներով ծանրա-բեռնուած ժամանա-կացոյց մը:

Վերջինիս մէջ Փաթրիք Ֆիորիի, Լավուայի եւ Կարուի մեկնաբանած «Պէլլ» երգը 1999ին ընտրուեցաւ տարուան թուականներուն: Իր ունեցած էլոյթները եւ յատկապէս 1998ին, Լիւք Փլա-մնտոնի եւ Ռիչըրտ Քոչիանթի «Նոթր Ծամ տը Փարի» շարք մը ձայնապնակ-ներ, ինչպէս՝ «Ժիւք

ԱՅՍՕՐ

- Ջուր Միքայէլի փառատուն. երաժշտական թա-տերախաղ՝ «Էվիթա», ժամը 20:30ին, Ջուր Միքա-յէլի ամփոփաւորում:
- Երգահանդէս՝ Փաթրիք Ֆիորիի ելոյթ, ժամը 8:30ին, ԵՌԵՆԵՍՔՕ:
- Թատերական ներկայացում՝ «Թրանսփարն-սի», ժամը 20:30ին, «Ալ Զամոյա» թատերարան:
- Երգահանդէս, «Հիլթըն Ռուիզ» եռեակի, «Ռո-գեանա Վիթթո» քառեակի եւ «Էնտրի Ելեմիլը պոյզ պէնտ» խումբի ելոյթ, ժամը 20:30ին, «Ալ Մալիկէ» թատերարան, մինչեւ 11 Հոկտեմբեր:
- Թատրոն՝ «Պիլիքար Կոստո», ժամը 20:30ին, «Պէլլուր» թատերարան, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Պիլոնիկիկ», Մոնա Ապի Հաննայի գործերը, «Տար էլ Մոնա» ցու-ցարան, մինչեւ 11 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆէյզըզ», Ֆլա-ւիա Բոտտիի գործերը, «Էսփաս էս. Տէ.» ցուցարա-րան, մինչեւ 18 Հոկտեմբեր:

ՕԴԵՐԵՒՈՅԹ

ՇԱՐԱԹ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ 3ԵՐԵԿ՝ 28°C
ԳԻՇԵՐ՝ 21°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 65%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 11 Հոկտեմբեր 1953

ՍԱՄԱՐԵ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԿԱՐԵՒՈՐ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԱՆԹԻԼԻԱՍԻ ԳԱՀԻՆ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Է՛», Կ'ԸՍԷ ՍՐԲԱԶԱՆԸ

«Մարմար»ի թղթակիցը տեսակ-ցութիւն մը ունենալով եգիպտոսի եւ Յունաստանի առաջնորդ Մամբ-րէ արք. Սիրուենանի հետ կարգ մը հարցումներ ուղղած է անոր եւ ստացած համապատասխան բացատ-րութիւններ: Ստորեւ կու տանք այդ տեսակցութեան կարեւոր կետերը.
- Սրբազան, ի՞նչ վիճակ կը պար-գէ Յունաստանի հայ գաղութը:
- Յունաստանի երբեմնի 70 հա-զարի հասնող հայ գաղթականութե-նէն այժմ մնացած է 10 հազար հո-գի միայն, որոնց մեծագոյն մասը կ'ապրի Աթէնքի ու Սելանիկի մէջ: Այս երկու քաղաքներէն բացի, ու-նիքն արեւմտեան փոքր գա-ղութները գաղթական քաղաքներու եւ կղզիներու մէջ:
Աթէնքի մէջ ունիք 3 եկեղեցի՝ 4 քահանայներով, որոնցմէ մին շրջուն հովիւ է հեռաւոր վայրեր հաստատուած մեր ժողովուրդին: Ունիք երկու վարժարան, որոնց շուրջ միացած եւ համախմբուած են ազգի բոլոր հասուն ծնեքը:
- Եթէ Խաչատուրեան պատրիարք կաթողիկոսական գահին յարմարա-գոյն ու արժանաւոր թեկնածուն:
- Կը խորհիմ, որ վախճանելու հայ-րապետին գործը շարունակելու եւ Աթիլիասի հայրապետական թափուր քննարկութեան արժանաւոր անձով մը լեցնե-լու միակ եւ յարմարագոյն թեկնա-ծուն Գարեգին սրբազանն է, իր մտա-ւոր կարողութիւններով, իր արժա-նիքներով եւ անբասիր կենցաղով ազ-գին սէրն ու համակրութիւնը վայե-լող:
- Եթէ Խաչատուրեան պատրիարք կաթողիկոսական գահին յարմարա-գոյն թեկնածուն:
- Եթէ Խաչատուրեան սրբազան ար-ժանապէս գրաւէ Կիլիկիոյ կաթողի-կոսական աթոռը, հայ ժողովուրդը, Նորին ամենապատուութեան թափուր ձգած աթոռին վրայ պիտի բերէ ու բազմեցնէ արժանաւորագոյն բարձ-րաստիճան եկեղեցական մը՝ ի մեծ ուրախութիւն ամենուս:


ԱՅՍՕՐ 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

1909- խարբերող ձամբուն վրայ կը սպաննուի յեղափոխական գործիչ Եղիշ Թոփանեան:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻՔԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՕԼԻՄՓԻԲ - Հ.Մ.Ը.Մ. ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի ֆուտբոլի ասոցիացիայի կողմից 2003 թվականին Հ.Մ.Ը.Մ. լիգայի շարքում անցավ 2003 թվականի օլիմպիկ խաղերի ժամանակահատվածում լիգայի մեկնի հարապարակ խաղերի արժեքը 8:30ին պիտի ձևավորվի Լիբանանի ասոցիացիայի Օլիմպիկ ղեկավարի կողմից:

Եղանակի բացման արժեքները, Հ.Մ.Ը.Մ. 3 - 1 արդիւնքով պարտութուն մը կրեց Նըժմէէյ, նոյն դաշտին վրայ, մինչ Օլիմպիկ, որ անցեալ եղանակին լիգայի մը իրագործել, 1 0 արդիւնքով պարտութեան մատնեց Հ.Մ.Ը.Մ.: Հ.Մ.Ը.Մ.ի վաղուան արժեքները պիտի ըլլայ Սաֆա: Ստորեւ՝ 21րդ հանգրուանի արժեքներուն յայտագիրը:

Ժամ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Շաբ. Սահէլ - Թատ. Սուր	4:00	Մարգարակ Աւազ
Ահտ - Սապարրա	4:00	Ահտ
Օլիմպիկ - Հ.Մ.Ը.Մ.	8:30	Սայտա

Ժամ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաժէս - Անսար	4:00	Պուրճ Համուտ
Սաֆա - Հ.Մ.Ը.Մ.	4:00	Սաֆա

ԴԵՊՈՒՄԱՅՏԱ ՕԹՈՊՈՒՄՆԵՐ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՍՏԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի համակիրներու ակումբը, խումբին համակիրներուն համար տրամադրած է օթոպիսներ, որոնք պիտի ապահովեն համակիրներուն Սայտա - Պէյրուք երթուղարձը: Օթոպիսները, այսօր՝ Շաբաթ, երեկոյեան ժամը 6:00էն սկսեալ «Շաղպոյեան» կէտրոնէն պիտի սկսին ուղղուիլ հարա:

ՖՈՒՏԻԼԱ 1. ՍՈՒՉՈՒՔԱՅԻ ԿՐԱՆ ՕՐԻ

ՇՈՒՄԱԽԸՐ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅՅ ԿԵՑԵՐՈՐԴ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ

Յորմիլյա 1ի 2003ի աշխարհի ասոցիացիայի կողմից 16րդ և վերջին կրան փրին տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի օր, Սուպուրայի մէջ (ձափոն):

53 լէվինոց այս արժեքներն ընդհանուր երկարութիւնը 308 քմ. է: Մրցումը վստահաբար պիտի ըլլայ տաք, նկատի ունենալով որ պիտի վճռուի աշխարհի ասոցիացիայի ճակատագիրը:

Տիտղոսին թեկնածու վարորդներն են գերմանացի Միքայէլ Շումպերը և ֆինլանդացի Քիմի Ռայթոնը: Շումի մէկ կէտի կարիքը ունի ապահովելու տիտղոսը, մինչ Ռայթոնը պարագան շատ աւելի դժուար է. ան պէտք է անպայման առաջին հանդիսանայ, իսկ Շումի ոչ մէկ կէտ պէտք է ապահովէ:

Նշենք, թէ վաղը պիտի յատկանայ նաեւ, թէ ո՞ր խումբը՝ Ֆեռարի կամ Ուիլիըմս պիտի շահի խմբային կրան փրին նախօրեակին:

- 1.- Միքայէլ Շումպերը (Գերմանիա) Ֆեռարի 92 կէտ
- 2.- Էիմի Ռայթոնը (Ֆինլանդիա) Մաքլարըն 83 կէտ
- 3.- Խուան Փալլո Մոնթայա (Ել Սալվադոր) Ուիլիըմս 82 կէտ
- 4.- Ռալֆ Շումպերը (Գերմանիա) Ուիլիըմս 58 կէտ
- 5.- Ռուպէն Պարիզելլո (Պրագա) Ֆեռարի 55 կէտ

ԽՈՒՄԵՐՈՒ ԴԱՍՏՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Ֆեռարի	147
2.- Ուիլիըմս	144
3.- Մաքլարըն	128
4.- Ռընօ	84
5.- Սաուպըր	19
6.- ՊԱՐ	18
7.- Ժակուար	18
8.- Թոյոթա	14
9.- Ճորտըն	13

Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԵՒԳ

ՃԱՏՐԱԿ

Ճատրակի դասընթացները կը վերսկսին Ուրբաթ, 17 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, Էշրեֆի «Ազատամարտ» ակումբի «Ճաք Չուխատարեան» սրահին մէջ:

Նորեկներու արձանագրութիւններուն համար կարելի է հեռաձայնել 01 - 581983 թիւին:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕ-2004Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԿԵՐԶԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ՝ ԱՅՍՕՐ

Եւրո-2004ի կտումի արժեքներին, այսօր Եւրոպայի դաշտերուն մէջ տեղի կ'ունենան քսան ճակատումներ, որոնց արդիւնքներուն յայտնի տակ պիտի յատկանան տասը խմբակներուն վերջնական դասաւորումը:

Վստահաբար, որ պարագլուխի դիրքերը գրաւող խումբերը պիտի ապահովեն Փորթուգալի իրենց տոմսը, մինչ երկրորդ դիրքերը գրաւող տասը խումբերը իրարու հետ փլէյօֆի մրցումներ պիտի կատարեն՝ երթուղարձի դրութեամբ, որոնցմէ ետք պիտի յատկանան մնացեալ հինգ խումբերուն անունները:

Այսպիսով, այդ խումբերուն ընդհանուր թիւը պիտի բարձրանայ 15ի: 16րդ և վերջին խումբը պիտի ըլլայ արժեքները հիւրընկալող երկիրը՝ Փորթուգալ, որ կտումի մրցումներ չկատարեց:

Նշենք, թէ ցարդ չորս խումբեր միայն ապահոված են իրենց տոմսերը, իրենց խմբակին պարագլուխի դիրքերը գրաւելով: Անոնք են. Ֆրանսա (Ա. խմբակ), Չեխիա (Գ. խմբակ), Շուէտ (Դ. խմբակ) և Պուլկարիա (Ը. խմբակ):

Մնացեալ վեց խմբակներուն վիճակը կը մնայ անորոշ, թէ Եւրո-2004ի խմբակներուն մաս կազմող կարգ մը խումբերուն պարագլուխին, յաղթանակն է միակ լուծումը:

● Ա. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւող և տիտղոսակիր Ֆրանսա, որ արժեքներին միակ խումբն ըլլալով իր կատարած ետք մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած է, ապահոված է իր տոմսը: Իսրայէլի ղեկավար կատարելիք արժեքները, երկուքին համար ալ կացութեանն են պիտի չփոխուի, որովհետեւ Իսրայէլ տարած ետք մրցումներուն ընթացքին արձանագրած են երկու յաղթանակ, 1 հաւասարութիւն և կրած՝ չորս ետք պարտութիւն: Անոնք իսկ ապահոված է փլէյօֆի իր տոմսը:

● Բ. ԽՄԲԱԿԻՆ կացութիւնը կը մնայ անորոշ, որովհետեւ յաջորդաբար առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը՝ Գանիա, Ռումանիա և Պանիա յոյս ունին գրաւելու խմբակին պարագլուխի դիրքը: Վերոնշեալ երեքն արժեքներին մասնակցելու յոյս ունին նաեւ Նորվեգիա: Ամէնէն անբախտը կրնայ ըլլալ Ռումանիա,

որովհետեւ մրցում չունի կատարելիք:

● Գ. ԽՄԲԱԿԻՆ կացութիւնը արդէն իսկ յատկացած է: Չեխիա ապահոված է իր տոմսը, մինչ Հոլանտա պիտի մասնակցի փլէյօֆի մրցումներուն, ինչ որ ալ ըլլան անոնց արձանագրելիք մրցումներուն արդիւնքները:

● Դ. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւող Շուէտ, արդէն իսկ ապահոված է իր տոմսը, մինչ փլէյօֆի մրցումներուն մասնակցելու համար, այսբարբ բաւական սուր պիտի ըլլայ Լաթվիոյ, Հունգարիոյ և Լեհաստանի մէջ:

● Ե. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւող Գերմանիա, որ պիտի հիւրընկալէ Իսրայէլի, կամ պէտք է վերջին խումբը պիտի ըլլայ մրցաշարքը հիւրընկալող երկիրը՝ Փորթուգալ, որ կտումի մրցումներ չկատարեց:

● Զ. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւող Յունաստան է՝ պարտութեան մատնէ իր հիւրը՝ հիւսիսային Իրլանտան, առանց սպասելու Հայաստան - Սպանիա մրցումին արդիւնքին, պիտի ապահովէ իր տոմսը, որովհետեւ այժմ մէկ կէտով կը գերապանցէ Սպանիան: Այդ մէկը տեղի ունենալու պարագլուխին, Սպանիա պիտի մասնակցի փլէյօֆի մրցումներուն:

● Հայաստան, որ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Սպանիան, կտումի վերջին օրը, մրցաշարքին վերջին և մեծագոյն անակնկալը կրնայ ստեղծել, եթէ յաջողի պարտութեան մատնել սպանական կազմը:

Հայաստանի մարզիկները ցարդ իրենց կատարած ետք մրցումներուն ընթացքին արձանագրած են երկու յաղթանակ, 1 հաւասարութիւն և կրած՝ չորս ետք պարտութիւն: Անոնք ետք կէտով կը գրաւեն խմբակին չորրորդ դիրքը: Անոնք ցարդ նշանակած են 7 կոլ, իսկ իրենց բերդէն ներս ստացած՝ 12 կոլ:

● Ե. ԽՄԲԱԿԻՆ կացութիւնը կախեալ է թուրքիա - Անգլիա մրցումէն: Հիւր կազմը՝ Անգլիա, նոյնիսկ եթէ հաւասարութեամբ մըն ալ վերադառնայ Պուլկարի, պիտի ապահովէ իր տոմսը, որովհետեւ այժմ մէկ կէտով կը գերապանցէ թուրքիան: Այս մէկը տեղի ունենալու պարագլուխին, կամ պէտք է վերջին խումբը պիտի ըլլայ մրցաշարքին:

Քիան: Այս մէկը տեղի ունենալու պարագլուխին, կամ՝ Անգլիոյ յաղթանակին պարագլուխին, թրքական կազմը պիտի մասնակցի փլէյօֆի մրցումներուն:

● Ը. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւող Պուլկարիա, արդէն իսկ ապահոված է իր տոմսը, մինչ փլէյօֆին տոմս մը ապահովելու համար պայքարը պիտի ըլլայ Խրուաթիոյ և Պելճիքայի միջեւ:

● Թ. ԽՄԲԱԿԻՆ պատկերը եւս կը մնայ անորոշ, թէ Իտալիոյ արձանագրելիք յաղթանակին պարագլուխին ամէն ինչ կը յատկանայ ևս Կալէս կը մասնակցի փլէյօֆի մրցումներուն: Անոնք երկուքն ալ իրենց մրցումները պիտի հիւրընկալեն իրենց դաշտերուն վրայ: Իտալիա պիտի հիւրընկալէ Ալբանիան, իսկ Կալէս՝ Սերպիան:

● Ժ. ԽՄԲԱԿԻՆ պարագլուխի դիրքը գրաւելու յոյս ունին երեք կազմեր՝ Չուիցերիա, Ռումանիա և Այր: Անոնցմէ մէկը պիտի ապահովէ փլէյօֆի մրցումներուն իր տոմսը, մինչ երրորդը դուրս պիտի մնայ մրցաշարքէն:

Նշենք, թէ տասը խմբակներուն մաս կազմող 50 խումբերէն տասն, այսօր մրցում չունին կատարելիք, որովհետեւ արդէն իսկ կատարած են ութական մրցում:

ՃԱՏՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂՈՑ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՊՈՒԼԿԱՐԻԱ ԶՄԵԿՆԵՑԱԻ

Հայաստանի փոքր ճատրակի ազգային խումբը, երէկ անհասկնալի դարձանքներով մերժեց մեկնիլ Փլովպիոյ (Պուլկարիա) իր մասնակցութիւնը բերելու Եւրոպայի խմբային ախոյեանութեան մրցաշարքին:

Հայաստանի ճատրակի ֆեդերասացիոնի նախագահ Լ. Մանիկ Չարաբեան ոչ մէկ բացատրութիւն գտաւ այդ ուղղութեամբ: Այդպէս հասարականք, սակայն, որով մաս կը կազմեն՝ Էլիսն Գանիէլեան, Լիլիթ Սկրպիեան և Նելլի Աղիսեան, մեկնեցաւ Պուլկարի, մարտի Արսէն Եղիազարեանի գլխավորութեամբ:

ՍՏՈՐԵՒ՝ այսօր Շաբաթ, 11 Հոկտեմբերին տեղի ունենալիք քսան մրցումներուն ամբողջական յայտագիրը (ժամերը՝ Պէյրուքի ժամանակացոյցով):

ԺԱՄ	ԴԱՇՏ
Կիպրոս - Սլովենիա	20:30
Ֆրանսա - Իսրայէլ	21:45
Գ. ԽՄԲԱԿ	
Պանիա - Գանիա	21:00
Նորվեգիա - Լուքսամպուրկ	21:00
Գ. ԽՄԲԱԿ	
Աւստրիա - Չեխիա	18:00
Հոլանտա - Մոլտովիա	21:30
Դ. ԽՄԲԱԿ	
Շուէտ - Լաթվիա	18:00
Հունգարիա - Լեհաստան	18:00
Ե. ԽՄԲԱԿ	
Գերմանիա - Իսրայէլ	18:00
Սկոտլանդ - Լիթվանիա	18:00
Զ. ԽՄԲԱԿ	
ՀԱՅԱՍՏԱՆ - Սպանիա	19:00
Յունաստան - Հիւս. Իրլանտա	19:00
Ե. ԽՄԲԱԿ	
Թուրքիա - Անգլիա	21:00
Լիթվանիա - Սլովակիա	21:00
Ը. ԽՄԲԱԿ	
Պելճիքա - Էսթոնիա	21:15
Խրուաթիա - Պուլկարիա	21:15
Թ. ԽՄԲԱԿ	
Իտալիա - Ալբանիան	21:45
Կալէս - Սերպիա	21:45
Ժ. ԽՄԲԱԿ	
Չուիցերիա - Այր	18:30
Ռումանիա - Վրաստան	18:30

Ստորեւ՝ տասը խմբակներուն ընդհանուր դասաւորումը՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն նախօրեակին:

ԺԱՄ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Ֆրանսա	7	0	0	26	2	21
2.- Սլովենիա	4	1	2	13	10	13
3.- Իսրայէլ	2	3	2	9	8	9
4.- Կիպրոս	2	1	4	7	16	7
5.- Մայթա	0	1	7	5	24	1

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
1.- Գանիա	4	2	1	14	8	14
2.- Ռումանիա	4	2	2	21	9	14
3.- Պանիա	4	0	3	6	7	12
4.- Նորվեգիա	3	2	2	8	5	11
5.- Լուքսամպուրկ	0	0	7	0	20	0

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
1.- Չեխիա	6	1	0	20	3	19
2.- Հոլանտա	5	1	1	15	6	16
3.- Աւստրիա	3	0	4	10	11	9
4.- Մոլտովիա	2	0	5	5	14	6
5.- Պելճիքիա	1	0	7	4	20	3

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
1.- Շուէտ	5	2	0	19	2	17
2.- Լաթվիա	4	1	2	9	6	13
3.- Հունգարիա	3	2	2	14	7	11
4.- Լեհաստան	3	1	3	9	6	10
5.- Սան Մարինո	0	0	8	0	30	0

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
1.- Գերմանիա	4	3	0	10	4	15
2.- Իսրայէլ	4	1	2	11	6	13
3.- Սկոտլանդ	3	2	2	11	8	11
4.- Լիթվանիա	3	1	3	7	10	10
5.- Ֆարո կղզիներ	0	1	7	7	18	1

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
1.- Յունաստան	5	0	2	7	4	15
2.- Սպանիա	4	2	1	12	4	14
3.- Ռեքանիա	2	4	2	11	10	10
4.- Հայաստան	2	1	4	7	12	7
5.- Հիւս. Իրլանտա	0	3	4	0	7	3

ԺԱՄ	Գ.	Դ.	Ը.	Թ.	Ս.	ԿԵՏ
-----	----	----	----	----	----	-----

ԷՄԸՍԹԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ

ՄԱՀԱՊԱՏԻԺԻ ՋՆՁՈՒՄԻ ԿՈՉ՝ ԱՇԽԱՐՀԻՆ

ԼՈՆՏՈՆ, 10 (ԱՖՓ).- Էմըսթի Ինթերնեյշնալ կոչ ուղղեց աշխարհի տարածքին ապրող ժողովուրդներուն՝ ճնշում բանեցրնելու, որպեսզի պետութիւնները չնջեն մահապատիժը:

Միջազգային կազմակերպութեան տնօրէնը՝ Իրէն Խան ըսաւ, որ մահը արդարութիւն չէ: Ան աւելցուց, որ մահապատիժը կը բռնաբարէ մարդկային արժէքներու եւ արժանապատուութեան հիմները, հետեւաբար ամօթալի է, որ տակաւին կան երկիրներ, որ մահապատիժը կը տրուի ու կը գործադրուի:

Էմըսթիի ունեցած տեղեկութիւններուն համաձայն, 2002ին, 1526 հոգի մահապատիժի ենթարկուած է 31 երկիրներու մէջ:

ՇԻՆԵՐՈՒ ՄԵԾ ՑՈՅՑ...

Շարունակուած 2րդ էջէն

ուրմերու դէմ, իսկ Պարուպայի մէջ ալ, իրաքցի չորս ոստիկաններ վիրաւորուեցան, երբ զինեալներ ձեռնառումներ ցետեցին ոստիկանատան մը վրայ:

● ԹՈՒՐԻՔԻՈՅ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ ըսաւ, որ Անգարա մտահոգ է թրքական ուժերուն Իրաք առաքման որոշումին դէմ Իրաքի ղեկավարութեան յայտարարած կեցումաձեռնով: Կիլ աւելցուց, որ Անգարա իր մտահոգութիւնը փոխանցած է Ուաշինգթոնի, պահանջելով որ անկիպ լուծում մը գտնէ հարցին:

(ԱՖՓ)

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՉԱՅՆԸ

ԷՉ4

ԻՐԱՆՑԻ ՇԻՐԻՆ ԷՊԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԻՍԼԱՄ ԿԻՆՆ Է, ՈՐ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻՆ



Նոպէլեան մրցանակներու 102 տարւան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով իսլամ կին մը կ'արժանանայ խաղաղութեան մրցանակին: Արդարեւ 56ամեայ իրանցի Շիրին Էպատի երէկ արժանացաւ այդ պատիւին: Ան ոչ միայն առաջին իսլամ կինն է, որ կը տիրանայ այս մրցանակին, այլեւ՝ առաջին իրանցին, որ Նոպէլեան մրցանակի մը կ'արժանանայ:

Նոպէլեան խաղաղութեան մրցանակը յայտարարող յանձնախումբը ըսաւ, որ մրցանակը Էպատի յանձնուեցաւ ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց պաշտպանութեան գծով կատարած աշխատանքին ու ճիգերուն համար: Յայտարարութիւնը կը շեշտէր յատկապէս կիններու եւ մանուկներու իրաւունքներու գծով անոր կատարած աշխատանքը: Յանձնախումբը կը նշէր նաեւ, որ Էպատի կը ներկայանայ իբրեւ լուրջ մասնագետ մը եւ քաջ անձնատրութիւն մը,

որ վայրագութեան ու բռնարարքներու ծամանակաշրջանի մը մէջ յամառօրէն շարունակեց զօրավիգ կանգնիլ խաղաղութեան: Յանձնախումբը աւելցուց, որ հաճոյք է իրեն համար այս տարուան խաղաղութեան մրցանակը նուիրել կնոջ մը, որ մաս կը կապմէ իսլամական աշխարհին, որ պէտք է հպարտ զգայ Էպատիով:

Էպատի մաս կը կապմէր 165 թեկնածուներու, որոնց կարգին էին Յովհաննէս Պօխատանքը: Յանձնախումբը կը նշէր նաեւ, որ Էպատի կը ներկայանայ իբրեւ լուրջ մասնագետ մը եւ քաջ անձնատրութիւն մը,

քննադատեց արդիւնքը, որ անտեսած էր իր հայրենակից պապը: Վաւենսա ըսաւ, որ յանձնախումբը «մեծ սխալ» մը գործած է 25 տարիէ ի վեր խաղաղութեան համար նուիրուած պապը կը զրկուի այս պատիւէն: Վատիկանէն պաշտօնական աղբիւր մը սակայն յայտնեց, որ պապը անձամբ շնորհաւորական գիր պիտի ուղարկէ Էպատիին:

Էպատի իր կարգին յայտարարեց, որ անակնկալ մըն էր իրեն համար արդիւնքին յայտարարութիւնը: Էպատի ըսաւ նաեւ, որ մրցանակը կը նուիրէ բոլոր անոնց, որոնք կ'աշխատին Իրանի մէջ ծո-

ղովրդավարութեան համար:

Էպատի, որ փաստաբան է եւ նախախլամական լեղափոխութեան շրջանին դատաւոր էր, կոչ ուղղեց թեհրանի իշխանութիւններուն՝ ապատարձակելու քաղաքական բանտարկեալները: Ան կոչ ուղղեց նաեւ կառավարութեան, որ յարգէ մարդկային իրաւունքները:

● ԻՐԱՆԻ կառավարութեան բանբերը ողջունեց յանձնախումբին յայտարարութիւնը, որ մրցանակին արժանի նկատած է իրանցի իսլամ կին մը: ● ԻՐԱՆԻ բարեկարգական ճակատը

մեծ ուրախութեամբ ողջունեց Էպատիի նուաճումը, որ կրնայ թափ տալ բարեկարգչականներու գործունէութեան:

● ՖՐԱՆՍԱՅԻ նախագահ Ժաք Շիրաք, Չեխիոյ նախկին նախագահ Վալադ Կաւալի, Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խաիէ Սոլանա եւ արտաքին կապերու յանձնաժողովի բանբերը ողջունեցին Նոպէլեան խաղաղութեան այս տարւան մրցանակակիրը եւ անոր ընտրութիւնը:

(ԱՖՓ)

ԵՐԿՈՒ ՊԱՅԹՈՒՄ՝ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ԲԱՐԻԻՂԻ ԶՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Երէկ գիշեր երկու զօրաւոր պայթումներ յետոյ են հիւսիսային Իրաքի քարիւղի գտարանի մը մէջ, պատճառելով ահաւոր հրդեհ: Յարդ յստակ չէ, թէ զոհեր կամ վիրաւորներ կա՞ն, թէ ոչ:

Մտաքին պայթումը հետեւանք է ակնուած ռումբի մը: Երկրորդը, որ շուրջ մէկ ժամ ետք տեղի ունեցած է, հետեւանք է առաջինի պատճառած հրդեհին: Երկու պայթումներն ալ տեղի ունեցած են Քերքուքի մէջ:



Արուեստից Վարժարան

ԱՄԵՍՐՈՊԵԱՆ



Ձեռ

Bourj Hamoud, Arax street, Tel.: 01/260504, Fax: 01/262955

ամենա Ա օտիկ թեֆնիֆըլ գոլէճը

- B.T. 100,000 LP/month * LCCIEB Business Specializations * ACCOUNTING 50,000 LP/month * TICKETING IATA
- English & Foreign Languages * PROFESSIONAL IT TRAINING * COMPUTER + INTERNET 25,000 LP/month
- COMPUTER Hardware * TV - Video & Radio Repair * Car Electricity & Electronics * HAIR STYLING * MAKE UP
- JEWELRY Design * DIAMOND Setting * WAX Molding * GEMOLOGY * COOKING